

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱՅՅԻ ԵՒ ՀԱՅ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ..... Ա. Ա.
 ՊԱՏՄԱԿԱՆ. Զինացիք Նկարագրեալ յինքեանց (Զէնկ—Քի—Թոնկ) Թարգ. Կ. Ս.Ի.Թ.Ի.ՃԵԱՆ
 ԲԱՆԱՍՏԵՂԵԱԿԱՆ. Փշուր Տիգրանակերտի ռամկական տաղերու.....
 ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նէեսա, Ասիդ, Արսին Թռչող վրայ սակաւ տեսութիւն ՍՏԵՓԱՆՈՍ ԵԱԶԸՃԵԱՆ
 ՎԷՊ. Մաղէնի մեղքը (ԲՕԼ ԱԼՊԱՆ) Թարգմանութիւն.....
 ՔԱՂՈՒԱՆ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ. Արտաքին, Ներքին, Աղղային.....
 ՍԻՄՅԵՆ ԵՒ ՄԱՐԻ. (Կղզիէ ալ Մօնթէրէն) Թարգմ. Մ. 20 ՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ ԵՒ զԱԼԱՐՆԵՐՈՒ — տարեկան..... Կէս ոսկի Օսման.
 » » վեցամսեայ..... Քառ » »
 Մէկ Թերթին զինն է 60 փարայ
 Օտար քաղաքաց համար տարեկան..... 12 Ֆրանք
 » » վեցամսեայ..... 6 »
 Թղթատարութեան ծախք տարեկան..... Պահ. արծ. 15
 վեցամսեայ » » 7 1/2

Մասիսի խմբագրութեան ուղղեալ ո՛ր եւ է գրութիւն կամ նամակ պէտք է
 ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս լրագրաց
 Ղալաթիա, Նորատունկեան խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՑ

1884

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 21 Սեպտեմբեր

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆՍԱԿԱԳՐՈՅ

3 ամիս Լոնտրայի վրայ (պանքային)	140
3 » » (վճուկնին)	109 3/8
3 » Բարիզի » (պանքային)	22 90
3 » » » (վճուկնին)	22 97 1/2

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵՐՂՈՅ

Օսմանեան Գոնսոյխտի

Երէկ երեկոյ գոցուեցաւ (Գ. Կ.) ԴՀԿն....	8 20 1/2
Պորսային գոցուելէն վերջը » » ...	8 20 1/2
Այսօր Բերայի մէջ » » ...	— —
Առաւօտուն բացուեցաւ » » ...	8 20 1/2
Բարձրագոյն գին » » ...	8 20 1/2
Նուազագոյն » » ...	8 20 1/2
Կէս օրին » » ...	8 20 1/2
Խնիքիէ եգիպտական	67
Երէկ իրիկուն գոցուեցաւ	67
Բերայի մէջ	— —
Այս առտուն բացուեցաւ	66 35
Կէս օրին	66 35
Հէվալէսիզ	45
Իհրօր գոնսոյխտէի	—
» Խնիքիէի	—
Փոխառուութիւն 1863 (Գ. Կ.)Ֆր. ...	62
» 1865 » » ...	54 50
» 1869 » » ...	46
» 1873 » » ...	41
Պոն տիւ Թրեզոր	Անգլ. Լ.ր. ... 48 50
Բուսիլի երկաթուղի	Ֆր. ... 42 50
Օպլիկտսիոն տը Բրիտիթէ	» 380
Բամնեթուղի Լաւրիսի	» 82

ԲԱԺՆԵՏՈՒՄՔ

Սօսիէթէ Ժէնէրալ	Անգլ. Լ.ր. ... 3 27
Քրէտի Ժէնէրալ (Գ. Կ.) ... Օսմն. Լ.ր. ...	6 30
Պանք տը Գոնս.	» ... 5 30
Սօս. Շանսէ վալէօր	Օսմն. Լ.ր. ... 3 30
Թրամուէյ	» ... 292 1/2

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	դրշ. ... 400
20 Ֆրանքնոց	» ... 87 30
Անգլիական ոսկի	» ... 140 8
Բօլ Իմբէրիալ	» ... 90 7
Քրիմից	» ... 54 20
Ռուսկի Թղթադրամ	» ... 8 93
» արծաթ	» ... 89 30
Ֆիօրին	» ... 9 2
Մէճ. արծ. (տարբ.)	» ... 408 4

Վ. Էջնոց	» ... 103
Հինգնոց	» ... 103 40
Մէթալիք	» ... 98
Պղինձ	» ... 800
Թղթադրամ	» ... 3000

ԵՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 2 Հոկտեմբեր ժամ 3 վայր. 15 երեկոյ

Անգլ. քօնսոյի գոցուեցաւ	101 5/8
Օսմն. բացուեցաւ	7 13/16
» » գոցուեցաւ	7 7/8
Օսմն. փոխառութիւն 1865	10 1/2
» » 1869	9 1/4
» » 1874	68
» » 1872	17 1/2
» » 1873	8 1/4
Փոխառութիւն 1877	80 1/4
Պանք Օթօման	12 7/8
Ռուսական փոխառ. 73 (Գ. Կ.)	94 3/4
Եգիպտական միացեալ (Խնիքիէ)	60 7/8
» առանձն. (Բրիտիթիէ)	84 3/4
Տայրա Սանիէ	59 1/4
Տօմանիալ (փոխառ. Բօլիլտ)	82 3/4
Հոնգարական պարտութուղի 1877	102 1/4
Փոխանակութիւն Բարիզի վրայ	— —

Վ. Էջնոն, 2 Հոկտեմբեր ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	124 70
Օսմանեան երկաթուղի	20 50

Բարիզ, 2 Հոկտ. ժամ 3 վայր. 15 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0.....բաց	109 40
» » 3 0/0.....բաց	78 32 1/2
Օսմանեան քօնսոյիտէ բանուեցաւ	7 80
» » գոցու. (Գ. Կ.)	7 82 1/2
» » 1865	—
» » 1869	—
» » 1873	41
Օսմանեան երկաթուղի	42 75
» Իէթի բամնեթուղիք	520
Պոնք Օթօման	573 75
Գրէտի Լիօնէ	552 50
» Ֆիսիէ	1323 75
Բամնեթում Լիօնի (գուր. կոր.)	1237 50
Սուէզի ջրանցք	1954 25
Ռուսական 5 0/0 1877ի	98 1/2
Իտալական Ռանթ	96 70
Եգիպտական միացեալ քոց	305
Սպանիական (արտաքին)	61 1/2
Բրիտիթի Թիւրք	370
5 0/0 Հելլենական	—
2էք Լոնտրայի վրայ	25 48

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

33 ՌԴ ՏԱՐԻ

1884 ՍԵՊՏԵՄԲԵՐ 22

ԹԻԼ 3736

ՐԱՑՖԻ

ԵՒ

ՀԱՅ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆԸ

Բ.

Ամէն կրունկ կարող է ձեռնառու լինիլ գեղարուեստից զարգացման . բայց մատենագրութիւնը որպէս զի սպորի, որպէս զի իւր բարգաւաճումն ստանայ, կարօտ է ընկերական ա՛յնպիսի կազմակերպութեան՝ որ գոթադղաբար մեզ անձանօթ է : Եւ սակայն աննպաստ այդքան պայմաններու մէջէն Հայ Մատենագրութիւնը ընծայած է Սեւ Լեւոն Մարգարէ, Շահէնը, Թորոս Լեւոնի, Հոյն Խնդէրը և Կոյժերը :

Նոքա որոց անձանօթ է մեր անցեալն և այն ոգին որ մեր ամէն թշուառութեանց մէջէն միշտ մաքրափայլ մեզ աւանդ պահուած է, չեն կարող նոքա տալ մեկնութիւն գրական այդ երեւոյթին : Հզօր է այդ ոգին և անանջատ ի մէջ . հզօր ա՛յնքան մինչ միմեանց հակադիր այդքան մտքեր կը նուիրեն իրենց խելքը, իրենց սիրտը, իրենց ոգին վասն յաջողութեան մի եւ նոյն գաղափարի :

Բայց պատմական վիպասանք թէ կարող են, չնորհիւ կորովի մտաց և անդուստ ոգւոյ, հրաժարիլ բազմաթիւ պայմաններէ, համարուած անհրաժեշտ, այլ սակայն կը կասի իրենց թռիչքը, կը մթազնի իրենց մտաց հորիզոնը եթէ պահ մը չապրին ի մէջ վայրացն ուր ապրած են զիւցազուէք, որք կը պատկերանան վիպասանին մտաց առաջ :

Արդարեւ օտար երկիր մը ո՛րքան ալ շուայլաբար օժտեալ լինի բնութեան պարգեւներով, բայց և այնպէս անզօր է խորին կերպով սիրտ գրաւելու : Անտարակոյս շատ ցաւալի լուր մը պիտի համարինք, իբր սիրողք գեղարուեստից, երբ իմանանք թէ Բարիզի Լիւքսէմպուրկն այրած է . բայց սակայն այդ ցաւը կարելի՞ է համեմատել այն վշտին հետ՝ զոր պիտի զգանք երբ Աղթամար անհետ լինի :

Մեր վիպասաններէն միայն Մամուրեան գրեց Սեւ Լեւոն Մարգարէ, առանց այցելած լինելու այն վայրեր զոր կը նկարագրէ : Սակայն այն բուռն զօրութիւնը որ անդ իմացութիւն կերպով կը ներգործէ բանաստեղծին վրայ, և անհնարին կ'ընէ նմա կիսկատար թողուլ իւր գործը մինչեւ որ չարտայայտէ իւր բոլոր զգացումներն, այդ անդ իմացութիւն զօրութեան ճնշման ներքեւ չգտնուեցաւ Մամուրեան և իւր մեծ գործը մնաց թերակատար :

Տէր Սարգսենց, նոյն իսկ իւր մատղաշ օրերը, սիրտը գորոված, հոգին յուզեալ, մտքն յափշտակեալ էր Տոսպեան ծովու տեսարաններով, հանդիսավայր յիսուն դարերու յիշատակաց :

Պերճ Պաօշեանց կը ճանչնար իւր Աշտաբակը, կը սիրէր զայն և Այրարատեան կենաց մանրանկարը կ'ընծայէր պատմելով Աղտարակի բարբերը :

Կունենայի՞նք Թորոս Լեւոնի եթէ Մերենց իւր սրտին բաբախմանց ունին դրած չըլինէր Թորոսի ապրած վայրերն, և չկարենայինք իրեն համար ըսել .

... Եկն իսկ ըստեպ վիկտորիոս
ի կուճա յայս ոգի ծըծեկ, ընդ հայրենին սրբամշտեալ դիմ,

Թափառէր անմըտունը յԱռնոսական ամայութիւնս՝
Պըշուցեալ կաթոգին ընդ դաշտորայն և ընդ երկինս .
Եւ մինչ ո՛չ և մի տեսիլ կենսածաղիկ բուժէր զթա-

խծն ,

Անողջն աստ հանգէ՛ք , մահուն դալուկն ի դէմն ,
Եւ յոյս :

Ա՛հ , ո՛չ , յոյսն ի սրտին էր , բայց մահու
դալուկն ի դէմն չհանգչեցաւ Ծերերնց ի շի-
րիմս հայրենի , այլ տառապեալ ոգւով ի
Կիարոս առանձնացեալ , անդ կ'ապրէր . կար-
ծես հողմոց բերած յիշատակներովը կենաց
հմայս հանէր ապագային :

Եւ պիտի վայելէի՞նք այդ սրտադրաւ
տխրութիւնը որ մտայոյզ կ'ընէ զմեզ և ե-
րազող , այդ հայրադորով սրտի արտայայ-
տութիւններն որք Երկանի և Թէոքրոս Ռըշ-
տանայ մէջ մի տողին մէջ զմեզ կը յափըշ-
տակեն , եթէ օր մը Ծերերնց , իբր Վոլնէյ
մը , Հայու սրտով չթափառէր յաւերակս անդ
որոց համար կրնար ըսել .

Ո՛վ դու յանցեալն և յայժմեւս խտախա՛նազելի ,
Ո՛վ վայելուչ դու պարտեղ տիեզերաց շուրջակայ ,
Հանդէս հանուրց արուեստից , գեղոյ բնութեան
հայելի .

Յամայութեան իսկ քում՝ ո՛վ իցէ բնաւ քեզ հա-
ւասար .

Գեղեցկագեղք են համայն վայրենագոյն իսկ քո
տունիք .

Ծաղկին երեգքդ խոպան քան թէ գաւառք բարե-
բունք .

Գու և յանկման անդ քոյին վերերեւիս քաջափառ ,
Եւ յաւերակքդ խանգար շողան շընորհք անբսպառ :

Բաֆֆի , ծնած և մեծցած Պարսից և
Ռուսաց հողերուն վրայ , միշտ մանրախոյզ
քննութեամբ ուսումնասիրած էր ազգին
անցեալ և ներկայ վիճակը : Բարք , սովո-
րոյթը , կրօնը , աւանդութիւնը , գաղափար
և ոգի , ո՛չ մի ինչ անծանօթ էր նմա :

Կովկասեան պատմութեան վերջի ժա-
մանակներու փառահեղ և տխրագոյն դըր-
ուադն կը կազմէ Մելիքներու պատմութիւ-
նը : Կարգա՛ խաճայի Մելիքներն և
կարծես թէ բոլորովին մի նոր աշխարհ կը
տեղափոխուի : Ազգային առաքինութիւն-
ներն , ազգային թերութիւններն տարօրի-
նակ գոյներով կը պատկերանան աշացդ ա-
ռաջ , ի լուր նոր Տիտաններու գիւցաղներ-
դութեանց : Ժամանակը կրնայ մեր մոգե-
րէն ջնջել մեր կարգացած գրքերու շատ
էջերն , սակայն ո՛վ որ կը կարդայ մի ան-

գամ Խամայի Մելիքութիւններն , ալ այ-
նուհետեւ ո՛չ մին այդ տեսարաններէն ան-
հետ կը լինի իւր աչքերէն , ո՛չ մին այդ
գիւցաղանց անուններէն կը ջնջուի իւր սըր-
տէն : Մէն մի անուն կը միտի սրտին խորը :
Բայց ,

Երեւեցան իբր ըստոյգ , անհետացան իբր երազ ,
էին որ զինչ և էին , արդ այսպիսիք են ահա :

Խնչպէս մի Մելիքլատէ հողուով ու մոօք
չը յափըշտակուէր երբ կը ճեմէր իւր հարց
հողերուն վրայ ուր իւրաքանչիւր քայլին
կրնար ըսել .

Եւ ըզփոշի զոր կոխեան աստ՝ գիւցաղունք կոխեցին .

Բաֆֆի կը սարսուէր , իրեն հետ կը սար-
սըռի ժողովուրդն ալ : Պատմական վիպա-
սանութեանց մէջ սարսուռը կիսամեռ հո-
գիներու ելեքարական ցնցումն է :

Մեր կամքէն անկախ պատճառներ ան-
հընարին կ'ընեն մեզ գրել Պ. Բաֆֆիի դոր-
ծոց վրայ այն եղանակաւ որ կը համապա-
տասխանէ մեր փափագանաց և տրամադրու-
թեանց , հետեւաբար հարկադրեալ ենք գո-
հանալ ընդհանուր տեսութիւններով :

Գ.

Երբ մի հեղինակ սիրելի է մտքիդ ու
սրտիդ հաւասարապէս , կարծես թէ բան մը
կը պակսի ի քեզ թէ այդ հեղինակի կենաց
մանրամասնութիւններուն իսկ տեղեակ չլի-
նիս : Հեղինակին ներքին կենաց և իւր գործոց
մէջ թուի թէ սերտ կապ մը կայ , և առանց
այդ կեանքն զիսնալու կարծես դժար է
ըմբռնել հեղինակին ողին : Երբ անցեալ տա-
րի Ժիւլ Հօշ հրատարակեց իւր սիրուն գիր-
քը Բաբելոնի իրենց աստ Գեջ , այդ գիրքը շա-
տերնիս ուրախութեամբ ողջունեցինք , վա-
սըն զի ի դէպ կուգար , մեզ զանազան
մեկնութիւններ տալ Ֆրանսայի մեր սիրած
հեղինակներու ներքին կենաց , մինչեւ իսկ
ասան մէջ ապրելու եղանակի վրայ :

Բնական է որ երբ Թիֆլիզ էի , առիթ
որոնէի այս հետաքրքրութեանս գոհացում
տալ : Կենթադրէի Բաֆֆիի մասին թէ այս
հետաքրքրութեան մասնակից են Թուրքիոյ
Հայոց մէջ Բաֆֆին սիրողներէն բազումք :

Երբ կ'ուզէի տեղեկութիւն ստանալ Պ. Բաֆֆիին ներքին կենաց վրայ, համոզուեցայ թէ այս տեսակ խնդիրներու մէջ հետաքրքրութիւնը մինչեւ ո՛ր աստիճան օգտակար գիւտերու ծնող կրնայ լինիլ:

Թիֆլիզ հասնելուս երկրորդ օրն Ապրիլի 26 Եւ երեկոյեան դէմ էր. մինչ կ'անցնէի արքունի փողոցէն տեսայ թէ հեռուէն կուգար միջահասակ, բաւական լայն մի պարոն, հապոյտ ակնոցներով: Քովէն անցնելով ձեռք երկնցուցի.

— Բարեւ, Պ. Բաֆֆի, ի՞նչպէս էք:

— Բայց, պարոն . . .

Եւ զարմացած կը նայէի թէ ո՞վ է անծանօթն որ զինքը կը ճանաչէր: Ծանօթացուցի զինքս, և երկար չկեցայ վասն զի ընկեր ունէի:

Յաջորդ օրը երբ միասին էինք, Պ. Բաֆֆի զարմացմամբ կը հարցնէր թէ ի՞նչպէս բազմութեան մէջ զինքն ճանչցայ, վասն զի ո՛չ զինքը տեսած էի և ո՛չ ալ լուսանկարը: Ընկերս ալ ամենեւին բան մը չէր ըսած:

Վասն զի, այս է պատասխանս, խուռն բազմութեան մէջ գեղեցիկ տաղանդ մը անտես չանցնիր. չեմ գիտեր ի՞նչ շնորհք կայ դէմքին վրայ որ մաքնիսական զօրութեամբ կը քաշէ տեսնողն:

Բաֆֆիի լուռ բնութեան թիւնը, մի քիչ խորհրդաւոր դէմքը, շարժումներն ոչ ինչ ի նմա ենթադրել կուտայ թէ վիպասան լինելու համար ստեղծուած լինէր: Սակայն երբ օր մը կը տեսնես զնա, շաբաթ հանած, գլուխը բաց, այն ժամանակին է որ այդ գեղեցիկ ճակատը, որ արդարեւ վաւեր ճակատ մ'է, կը հարկադրէ զքեզ մտածել թէ ի՞նչ որ ալ լինի արտաքին երեւոյթը, այդ ճակատն կրողը սքանչելի կերպով բանաստեղծ, վիպասան կրնայ կոչուիլ:

Թէ օր մը բարեկամաբար սեղանի մը վրայ կախէդու գինին յանկարծ մի քիչ շատ փախչի և երեւակայութիւնդ փոխադրուի աչքերուդ մէջ ու տեսնես թէ վիպասանը ո՛րպիսի բարեկամական գորով ցոյց կուտայ, այն ատեն կ'ըմբռնես թէ արտաքուստ անտարբեր երեւցած կերպարանք մը շատ տաքուկ սիրտ կը կրէ: Եւ վիպասան մը որ տաքուկ սիրտ չունի — կը նմանի կնոջ մը որ կ'ուզէ գեղեցիկ կոչուիլ առանց ունենալու արուոր աչքեր:

Պ. Բաֆֆիին տեսնելուս միւս օրն էր որ միասին գնացինք իւր տունը անցնելով այն լայն, մեծ ու անհոգ փողոցներէն որ քիչ շատ բնակչաց բնաւորութեանը յարմարցուած են: Կ'ուզէ՞ք ճանչնալ ժողովուրդի մը բարքը, կացութիւնը, գաղափարներն. երբ կը մտնէք քաղաք մը՝ պարտեցէք փողոցներն և շուտով ըստ բաւականին գաղափար մը կը կազմէք ձեզ հետաքրքրող այս կէտերուն վրայ:

Մտանք միաստաղ Սօլօւակի թաղը և հասանք Ալէշիկեան տան դուռը: Դուռը արդէն բաց է, և անհալ քիչ մը հողի վրայէ անցնելով փայտէ սանդուղի մը աստիճաններէն ելնելով, ներս մտանք սենեակի մը մէջ զոր պատեր պաշարեր էին դարձնաւորներն տերեւներն: Ուր ենք, քարակերտ փողոցի՞ մէջ թէ այդեստան մը: Կանանչ տերեւներն մթնշաղ գոյն մը կ'ընծայեն բընակարանին. փոքրիկ սենեակին մէջ, փոքրիկ գրասեղան մը կայ որու վրայ անհնարին է նշմարել փուռոյ հիւլէ մ'իսկ:

Ըսած են թէ «ոճը մարդն է», բայց ուրիշներն ալ կ'ըսեն թէ «կարասիքը մարդն է»:

Չափաւոր մեծութեամբ գրասեղանին ձախակողմն է մի գրադարան ուր կը պահուին մէյմէկ օրինակ հեղինակին գործերէն, և մի քանիներն իւր սիրած գրքերէն: Պ. Բաֆֆիի աշխատանոց սենեակի հանդէպ ուրիշ մի սենեակ կը պարունակէ գրքեր աւելի մեծ քանակութեամբ:

Ուր որ աչքերդ ածես Բաֆֆիի սենեակի մէջ, ակներեւ կը տեսնես գեղեցիկ ճաշակով օժտեալ տանուտէրը: Գրքերը կազմուած են գեղեցիկ, թաւապատ, ոսկեզօծ: Գրասէրներու համար հեշտութեանց մեծագոյնն է իրենց ամբողջ գգուել գեղակազմ մատենան մը: Իւր փարթամութեանց մէջ Ռօջիլտներէն մին — որ այնքան զրծբարկ վախճան ունեցաւ — երկու մեծ հըրճուանք ունէր, — աղքատաց բարիք ընել և աչքերն պարարել ի տես փառակազմ գրոց մատենադարաններու:

Բաֆֆիի սենեակին մէջ մի քանի պատկերներ, պարսկական «ֆ» մը և նատարանք կ'ամբողջացնեն համեստ կարասիքը:

Այս տեսարանը ինձ համար տարօրինակ էր. չէի կրնար ըմբռնել թէ ինչպէս մի մարդ կարող է զրեւ երբ մեծ գրասեղանի մը վր-

րայ իւր թիւերն ազատ չի պարզեր, երբ գրքերու կոյտ մը ղինքը չի պաշարեր, և գրասեղանը չնմանիր քառսի մը: — Բայց այդ կոկիկ, պարզ սենեկին մէջ Պ. Բաֆֆի կ'անկուի իւր միտքը, կը չափաւորէ հոգւոյն թւիչը: Ռուսիոյ մէջ գրող մը, նոյն իսկ երբ օրագրի մէջ կը գրէ, պարտաւոր է ամէն միջոց ձեռք առնուլ իւր եռանդը սահմանափակ ընելու համար: Երանի կը կարդան մեզ որ գրականութեան նպատաւոր աւելի իմաստուն օրինաց պաշտպանութեանը ենթարկեալ ենք ի թուրքիս:

Եթէ հեղինակը ինքնին չիտւթայ օրագրի մը էջերուն մէջ հրատարակելիք յօդուածոց կամ վիպասանութեանց մասին շեղթայապիլով ընել իւր միտքը, արդէն Պ. Մանասթրեանց անդ կեցած է: «Մշակ» օրագրի մէջ հրատարակեալ վիպասանութեանց կամ պատմական գրուածոց ձեռագրերն տեսայ. արիւնքներկ թանաքը շատ սքանչելի տողեր կ'առնու անդ. ձգած է: Մարդ կ'ապշի որ քաղաքակրթութեան մեծ դարուն վերջերը տակաւին օրագրութիւնը ենթարկեալ լինի մեծ պետութեան մը մէջ ամէն անգարդացած Մանասթրեանցներու հաճոյից, և մեծ տաղանդ մը պարտաւոր լինի իւր ամենէն գեղեցիկ տողերն զոհել ո՛ր և է անձի յիմարական մտածութեանց: Տասնեւիննէրորդ դարու վերջերը անհանդուրժելի է այդ ընդդէմ մտաց բարբարոսութիւնը: Ռուսական կառավարութիւնը, որ Ասիոյ մէջ քաղաքակրթութեան տարածման ամենահզօր միջնորդը կը հռչակէ ինքզինք, չուզեր մամուլը ազատութեան մասին օրինակ առնուլ թուրքիայէն: Ի՛նչ, ահեղ պետութիւն մը ապի մը հանդարտ եւ հաւատարիմ ժողովրդէն կը սարսափի՞ որ նորա մամուլը այսքան չարաչար կը կաշկանդէ:

Սակայն չյուսահատինք քաղաքակրթութեան յաղթանակէն: Մտաց արտայայտութիւններն առեն մը ուրիշ կարմիր գոյնով կը ներկուէին. այժմ արեւան տեղ յաջորդած է կարմիր թանաքն, իւր կարգին նա ալ անհետ կը լինի:

Բայց մինչեւ որ անհետ լինի, իցէ՛ թէ Ռուսիոյ կառավարութիւնը փոխանակ խաւարամիտ կառքոյներու, ունին դէնք մարդկութեան ճշմարիտ բարեկամներու ձայնին, որք միանգամայն ազգաց բարեկամներն են:

Երիտասարդ, լի կորովով կ'երեւի Ռուս ժողովուրդը, սակայն մտքի կաշկանդումը շատ շուտ անդամալոյծ կ'ընէ յոյժ քաջառողջ երեւցող ազգն իսկ:

«Մարդկային ցեղ մը կրնայ ուրիշ ցեղերէ «վերջ երևան դալ պատմութեան մէջ, բայց «միանգամայն անկիման դրօշմովը դրօշմուած «լինիլ, ա՛յնքան շուտ կը ծերանան ժողովուրդք ստրկութեան մէջ, ա՛յնքան քիչ «ժամանակ կը բաւէ կորաքամակ ընելու «զիրենք և կերպարանափոխ: Տեսար գա- «նոնք երէկ. լի; զեղուն էին կենդանու- «թեամբ. այսօր կ'անցնին, բայց այլ եւս «զիրենք չես ճանաչեր: Շատ աւելի վատ «է հետեւութիւնը երբ խնդրոյ առարկայ «են ժողովուրդք որք բնաւ ազատ չեն ե- «ղած: Անոնց ամէն մէկ օրը մի դար կը «հաշուի: Կը կարծէք թէ երիտասարդ են, «զի ոչինչ ըրած են, իբր այն թէ ի անցի- «չատակ ժամանակաց անտի ստրկութիւնն «չլինէր աշխատութեանց ամենէն դժնդա- «կը: Ի հեռուստ ձեզ թուի թէ՛ են նոքա «պարզամիտ առաքեալք պաղագային, և սա- «կայն նոցա ճակատներու վրայ արդէն դը- «րօշմալ են վ: զահաս ծերութեան կնճիռ- «ներն զոր անիրաւութեան թմբական արե- «գակն ի նոսա փորած է իրենց օրօրոցին մէ- «ջէն: Մերձեցէք դեռատի այդ ցեղերուն. «ի՛նչ կը գտնէք. — մահաւոր ծերութիւններ «որք տակաւին կեանք չփայլեալ արդէն «հիւժեալ են»: (Է. Գիլի. — Իմաստաբ- «բութիւն Թրանսայի պատմութեան):

Խնաստասիրին ցաւած ոգւոյն արտայայտութիւններն կը փափագինք որ օր մը չը լինին տխուր իրականութիւն: Վասն զի եթէ իբր մարդ ամէն ազգաց եւ ժողովրդոց զարգացման և մեծութեան փափաքողներն ենք, անշուշտ իբր հայ կը տենչանք որ քաղաքակրթութեան մէջ շուտ յառաջանան, որչափ հնար է շուտ, այն պետութիւնք որոց հովանւոյն ներքեւ կ'ապրին Հայեր: Տիրապետող ժողովուրդի քաղաքակրթութիւնը մեծապէս կը ներգործէ հպատակ ազգին զարգացման վրայ:

Եւ սակայն առ այժմ առ կախ կը թողունք մեր այցելութիւնը Բաֆֆիի տան մէջ, և յաջորդ շաբաթուան կը պահենք ներկայացնել զանազան առարկայներ որոց մի-

ջոցաւ Կովկասու և անդր-Կովկասու հայ ժողովուրդը կարծած է աւելի զգալի կերպով արտայայտել իւր համակրանքն առ Պ. Բաֆֆի :

Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԶԻՆԱՑԻՔ

Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ե Ա Լ Յ Ի Ն Ք Ե Ա Ն Յ

Ի ԶԵՆԻ-ՔԵ-ԹՈՒՆ ԳՆԴԱՍԿԵՐԷ
ՀԵՆՈՒՐԱՆԻ ԿԵՐԵՐԷ ԶԵՆԱՍԿԱՆԻ Ի ՓԱՐԷԿ

Բ .

ԿՐՕՆՔ ԵՒ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Կրօնները վաղուց ի վեր կան :

Ի սկզբան կը սահմանէին այն խորհրդաւոր կապն՝ որ արարածն արարչին հետ կը կապէ, և որոյ արտաքին նշաններն էին երկըրպագութիւն և շնորհակալութիւն : Այն այլազան ձեւերուն տակ, որք մարդկային հոգւոյն համակրութիւնը կը յայտնեն առ տիեզերական հոգին, գերբնականին խորհուրդը կը յայտնուի միշտ միացեալ ամենէն տարօրինակ պաշտամանց հետ : Մարդն առ Աստուած թռիչներուն մէջ անկումներ կ'ընէ և իւր անկատար բնութիւնը կը յիշէ : Բայց կայ առաջին թռիչ մը, որ թեւաւորի պէս է : Կրօնները նուազ կնճռոտ են քանի որ մարդ գէտ ի նախնական դարերը վերադառնայ : Հետզհետէ կը պարզին և կը ձգտին գէտ յայն միութիւն՝ որ ներդաշնակութիւնն ու գեղեցկութիւնը կը սահմանէ մեզ համար : Կը թուի թէ այն ժամանակներն Աստուծոյ արժանաւոր էին : Բայց այդ վիճակ աստիճանաբար կը պակսի քանի որ աշխարհս կը ծերանայ, և վերջապէս տկար նշոյլներ միայն կ'արձակէ այն ստուերներուն մէջէն՝ որք մարդկութեան ճանքուն վրայ կ'երկնան, ինչպէս գեղեցիկ օրուան մ'երեկոյանալուն մօտ : Այս տալաւորութիւն զգացած եմ ես մեր հին գիրքերն ուսումնասիրած և մեր իմաստնոց սքանչելի առաձները կարդացած ժամանակս : Նոյնն զգացած եմ նաեւ երբոր մեր ձակատագրին

գաղտնիքը փնտռած եմ Արեւմտեայց Ս. Գիրքերուն մէջ : Այնպէս թուած է ինձ թէ զուարթ լուսոյն մէջ օրն արդէն ծագած էր, և թէ մեք անոր վերջին աղօտ ցոլերը միայն կ'ընդունէինք : Ամեն տեղ կը տեսնեմ ճշմարտութեան մը ճառագայթումն, որոյ գեղեցկութիւնը մի է : Կը թուի ինձ լսել անհուն խմբերդ մը, յորում երկնից և երկրի ամեն ձայները ներդաշնակապէս կը միանան : Եւ երբ, այս երազին սխրանքը թողլով, հաւատոց քառոս մ'եղած աշխարհի խառնածայն ժխորը կը լսեմ, դարմանք կը գրաւէ միտքս, և պիտի երկրայէի ճշմարտութեան վրայ, եթէ այս հաւատը ինքնին չտիրէր մեր խղճին վրայ :

Մեք նախանձելու բան մը չունինք Արեւմտից կրօններուն վրայ, թէեւ նոյն տեսակէտը չենք բռներ : Ուստի ես չպիտի վիճարանիմ կրօններուն արժանեաց վրայ : Մարդը, վերէն տեսնուելով, աշխարհի փոքր է, որ բնաւ կարեւորութիւն չկայ գիտնալու թէ ի՞նչ կերպով կը պաշտէ զԱստուած : Տիեզերաց Արարիչն ամեն լեզու կը հասկընայ, մանաւանդ այն լեզուն որ լուծեան մէջ կը բարբառի հոգւոյն ներքին շարժումներով : Մեք ալ ունինք հոգւով երկրպագուներ և շրթամբք պաշտողներ, որք զիրար չեն ճանչեր : Մեք ունինք գաղափարական կրօն, որ մտաց ամբողջական կը հարկադրէ . ունինք նաեւ այն երկրաւոր կրօն, որ ձեռաց և ոտից ցոյցերու կը հարկադրէ : Միով բանիւ, մեք կը ճանչենք անկեղծն ու պիտակը :

Կրօնները մտաց աստիճաններուն զուգահաւասար են :

Մեք ունինք ուսումնականաց կրօն, որ մեր երկրին ամենէն լուսաւորեալ դասուն մտաւորական մշակութեան վիճակին կը համապատասխանէ, այն է Կոնփուկիոսի կրօնը, կամ լաւ եւս իմաստասիրութիւնը . վստքն զի անոր վարդապետութիւնն իմաստասիրական դարձոյցի մը պէտի վարդապետութիւն է, որ բարոյական առաձներ թողած է, բայց մարդկային ձակատագրին և աստուածային բնութեան վրայ իմաստասիրական հայեցողութեանց անձնատուր եղած չէ :

Կոնփուկիոս բաւական համարեցաւ հին աւանդութեանց յարգանք պատուիրել : Իւր յիշատակն այն աստիճան մեծ է, որ Զինտա-

տանի մէջ չկայ քաղաք մը, որ տաճար մը կառուցած չլինի ի պատիւ անոր: Իւր խնոստասիրական դրութիւնը մարդկային սրտին դատարարական մէջ կը կայանայ էապէս, և դատարարութիւն բառն ստուգիւ ա՝ մենէն յարմարագոյն բառն է սր ճշդիւ կը յայտնէ Կոնիուկիոսի կրօնին կամ վարդապետութեան նպատակը: Դատարարակել, այսինքն գետնէն վերցնել անկեալ մարդն, որ իւր կարողութեանց չարաչար գործածութեամբ նուաստացած է. բանալ անոր աչերն և ցուցնել անսահման աշխարհի կապուտադեղ պայծառութիւնը. վարժեցնել զայն քիչ քիչ թօթալեղու իւր ոչնչութիւնն, և ինքզինքը զգալ հոգի, խորհող, կամեցող և ճանաչող էակ: Խորհիլ, կամիլ, ճանաչել, երեք աստիճաններն են այն դատարարութեան, որ կ'սկսի զարթմամբ և կ'աւարտի զիտութեամբ, և որոյ բանաձեւարանն ա'յն աստիճան գեղեցիկ առածներ կը պարունակէ, որոյ նմանը ոչ մէկ խնաստասէր գրած է մարդկութեան վրայ:

Պէտք չէ սակայն կարծել թէ Կոնիուկիոսի վարդապետութիւնը միմիայն առանց որոշ մեթոտներ ցոյց տալու: Ամենաճիշդ ուսուցչութիւն մը կայ այդ վարդապետութեան մէջ, որ բարոյական կրթութեան գործնական դաս մ'է ճշմարտապէս:

Այս դրութեան հիմ եղող սկզբունքն է մարդկային բանավարութիւնն հաստատուն սահմանաց մէջ բռնել:

Կոնիուկիոս կ'ըսէր թէ մարդու սիրտը սրարշաւ ձիու մը կը նմանի, որ « ո'չ սանձ մօտիկ կ'ընէ, ո'չ ձայն », կամ լերանց զառիվայրերէն իջնող հեղեղի մը, և կամ պայթող բոցի:

Ասոնք բուն գորութիւններ են, զորս պինդ բռնելով զսպելու պէտք է աշխատիլ, առանց սպասելու որ աճին:

Կըսէր թէ մարդկային սիրտն անսիրտ իր էականն ո'ւնի, այն է արդարութիւն և խնաստութիւն, և թէ անոր հինգ զգայարանքն այնպիսի հրապուրիչ գորութիւններ ունին, որք զայն կը հեռացնեն այդ իրէականէն: Այդ հրապուրանաց վտանգներուն դէմ կամաւորապէս գինուորիլ, այս միջոցը կը խրատէ Կոնիուկիոս իւր հետեւողաց, և տուած՝ անպարտելի դէնքն է ակնածութիւն:

Ակնածութիւնն այն ընդհանուր զգացումն է, որ կենաց ամեն գործին վրայ կը տարածի: Բարուց ապականութեան կամ գեղձման առաջին պատճառն է զանցառութիւն: Բանավարութեան համար զանցառելի քանակութիւն չկայ:

Զանցառութիւն կամ անսիրտութիւնն է որ մեզ ունակութեան ձեռքը կը մատնէ, զոր անպատկառաբար երկրորդ բնութիւն անուանած են, որպէս թէ բնութիւնը մի եւ նոյն չլինէր: Ակնածութիւնն է որ, կենաց ամեն գործերուն վրայ տարածուելով, մանաւանդ ամենէն աննշաններուն վրայ, ի բաց կը վանէ վնասակար ազդեցութիւններն, և հետզհետէ կը կատարէ դատարարական երկայնամիտ գործը:

Կոնիուկիոս գիտել կուտայ մեզ թէ հինգ զգայարաններն, ինչպէս որ կը սահմանեն, կարողութիւններ կը կազմեն, բայց ոչ ձիրքեր: Սակայն մարդս ձիրքեր ստացած է բնութենէն, և ցոյց կուտայ մեզ: Ասոնք են, ակնածաւոր դէմք, քաղցր խօսք, սուր լսելիք, յստակատես աչք, խոհուն մտածութիւն: Մեր կարողութեանց այս մասնաւոր վիճակները պարտին անդլապէս զարգանալ:

Կոնիուկիոսի խնաստասիրական գրութեան հիմն է ուրեմն Յարգանք, ինչպէս որ աւետարանական վարդապետութեան հիմն է Սէր: Յարգանքը գործերու կ'ուղղուի, իսկ սէրն անձերու, կամ աւելի ճշդիւ խօսելով « ընկերին »:

Կերեւակայեմ — մտքիս քմահաճոյքն է այս — թէ Կոնիուկիոս կրցած է նշմարել այդ սէրն՝ որ ընկեր մը կ'ստեղծէ: Բայց մեր բարոյախօսն չէ իշխած առաջարկել այդ աստիճան կատարեալ նպատակ մը. ընկերի մը գոյութեան հաւատալու համար՝ Աստուծոյ մը վստահութիւնը պէտք էր: Լաւագոյն համարեցաւ մարդոյն թողուլ սիրոյ նախաձեռնութիւնն. և երբ մարդկային կատարելութեան հասնելու բանալին անոր ձեռքը կուտայ, մարդկութեան օգուտ քաղելէն անոյս չէ:

Ես յաւակնութիւն չունիմ կրօնի դասախօսութիւն ընելու, մանաւանդ համոզելու, քանի որ Կոնիուկիոս աղատ կը թողու ամեն մարդ հասկցածին պէս պաշտելու զԱստուած. բայց կ'ուզեմ զիտել տալ թէ այդ դրութիւն, որ մարդկային սիրտը բարձրա-

ցնեւրու վրայ կը կայանայ, որպէս զի յետոյ անոր՝ ամեն մտածութիւններն առ Աստուած ուղղէ, իբրեւ տեսակ մը հետեւանք ձեռք բերուած բարոյական զարգացման, վսեմ է և տրամաբանութենէ զուրկ չէ: Արդար կ'երեւի որ մարդկեղէն էակն առաքինութեան ամեն շքեղութիւններով զարդարուի, որպէս զի կարենայ հաղորդակցիլ աստուածեղէն էակին հետ: Աստուածապաշտութիւնն իբր նպատակ ներկայացնելը բարձր և վսեմ դադափար մ'է, որ միտքը կը գոհացնէ և խեղճը կը դիւթէ:

Թերեւս ամբաստանեն զիս թէ կը զարդարեմ. զայս նիւթ և տեսականին գեղեցկութիւնը միայն կը ցուցնեմ: Ընթերցողս ինձմէ աւելի լաւ գիտէ թէ՛ գիրքերը չքեղ կազմ ունին և մարդիկ շատ չեն բանար զանոնք. թէ պատուիրանները չեն զգաստացներ զամեն մարդ, և թէ զանոնք դործադրելու համար՝ բաւական չէ միայն գիտնալ: Ըսողներ եղած են թէ մեր բարոյականը կը նմանի մեռեալ լեզուներու, որք ոչ եւս կը խօսին, և կամաւ հնախօսական մակդիրը կուտան անոր... բայց ես շատ բարոյականներ գիտեմ, որք նոյն վիճակն ունին, և այնպէս կ'երեւի ինձ թէ եղբայրութեան ու հաւասարութեան, և մինչեւ իսկ ազատութեան առածներն առաւել խօսք յերկրողները կ'զբաղեցնեն՝ քան թէ անկեղծ աշակերտներ: Աւասիկ քննադատութիւն մը զոր դիւրաւ կրնամ ընել: Մարդկային մեծ ցեղը կազմող մարդիկ կը կը սիրեն դրացւոյն խոշոր շուղը քննել, և մոռնալ իրենց աննշմարելի... գերանն: Ասոնք անհետեւութիւններ են, որք առածներուն օգտակարութիւնն առաւել լաւ կը ցայտեցնեն. վստան զի քիչ մ'աւելի ակնածութեամբ և նուազ անհողութեամբ՝ կեանքն առաւել ազնիւ և առաւել յարգելի կը լինէր:

Վերստին կուգամ դործնական առածոյ: Կոնփուսիոս իւր վարդապետութեան մէջ շատ մը մանր միջոցներ ունի, որք յաղթաբար կը մարտնչին խոշոր սխալներու դէմ: Տեսակ մը նմանաբուծութիւն է (օմէօբութի) հոգւոյ հիւանդութեանց համար դործադրեալ: Օրինակի համար՝ կ'արգելու հաստատուն դադափարն, այսինքն նախապաշարուի: Արեւ թէ ամեն մարդիկ նման են,

հիններն ալ, նորերն ալ. ինչ որ բարի է առաջնոց համար, բարի է և վերջնոց համար. չեն տարբերիր իրարմէ: Անոնց ընթացից իմաստութեան նմանող լինելն և զանոնք ճանչելու աշխատիլն՝ ինքզինք ճանչելու համար հետեւելու լաւագոյն ուղին է: Միով բանիւ, կը ջանայ ստեղծել բովանդակութեան տեսակէտ մը, որ ամեն խիղճերը պիտի միացնէ. ոչ որ պիտի պրծանի այդ մագնիսականութենէ, և առանց թաքուն խորհրդոյ, առանց ուրիշ իդէական մը յղանալու, ամեն միտք պիտի դառնան դէպի բարոյական աշխարհի արեւն, որպէս զի անոր բարեբար լոյսն ընդունին:

Արեւ նաեւ. «Մտէք բնութեան ներքին սահմաններն և ուսէք բարին ու չարն, որպէս զի խորագոյն դրոշմուի ի ձեզ նոյն իսկ բնութեան զգացումն, և հակառակ տիեզերաց ընդարձակատարր մեծութեան և ընկերական վիճակները բաժնող հեռաւորութեանց, ձեր խղճին մէջ յղանաք էից հաւասարութեան սկզբունքը:

«Եթէ պինդ բռնէք ձեր խիղճը, կը չափաւորէք ձեր իղճերն, և կը հասնիք երկրաւոր կենաց իդէականին, որ է հանդարտութիւն մտաց:

«Հանդարտութիւնը տեսակ մ'աշխուրջ ուշադրութիւն է: Երբոր կատարեալ լինի, մարդկային կարողութիւնը իրենց ամեն միջոցներն երեւան կը հանեն, վստան զի լուսաւորեալ են բանավարութեամբ և պինդ բռնուած են ճանաչողութեամբ:»

Կանգ կ'առնում հոս: Հարկ չէ առաւել եւս ընդլայնել այս գեղեցիկ վարդապետութիւն, որ ամենէն փառաւոր մեծարանքն է մարդոյն առ իւր արարիչն:

Կոնփուսիոսի վաւերացուցած հնաւանդ կրօնն ո'չ պատկեր կ'ընդունէր, ո'չ քահանայ. այլ միայն քանի մ'արարողութիւններ, որք կրօնի մը կանոնները կը կազմեն: Այն արարողութիւնք քիչ կ'զբաղեցնեն այն մտքերն՝ որք սկզբունքները կը նկատեն:

Արօնական միութիւն չկայ Չինաստանի մէջ: Եւ ո՛ր կայ: Միութիւնը կատարելութեան վիճակ մ'է, որ ոչ մի տեղ կը տիրէ: Բայց եթէ Չինաստան քանի մը տիրող կրօնք ունի, կը փութամ ըսել թէ երեքէն աւելի չեն, և շատ քիչ է:

Կոնփուսիոսի կրօնէն զատ Լաո-Չէի կը-

ըօնը կայ, որ ստորին դասուց մէջ կը պաշտուի և հոգեւորութիւն կ'ընդունի: Կայ նաեւ Ֆոյի կրօնը կամ Պուղդայութիւն, որ բնագանցութեան կը վերաբերի, և որոյ մէջ սքանչելի տեսակէտներ կը գտնուին:

Ըստ յիշեալ վարդապետութեան, նիւթական աշխարհը պատրանք մ'է. մարդս պարտի առանձնութեան, անշարժութեան ձկտիլ բնութեան մէջ: Առ Աստուած հայեցողութեան վարդապետութիւնն է այս, այսինքն առ էակն աննիւթական: Այս իրէկան կենաց նպատակն է մտայ յախշտակութիւն բերել. այն ժամանակ աստուածային սկզբունքը կը տիրէ հոգւոյն վրայ, կը գրաւէ, կը թափանցէ դայն, և մահը կ'աւարտէ այդ խորհրդաւոր միացում: Այս է վերայեալ սկզբունք Պուղդայական կրօնին, որ իւր տաճարները, սեղաններն եւ մեծահամդէս պաշտամունքն ունի: Կ'աւելցնեմ թէ Պուղդայեան կրօնաւորներն՝ որք ընդարձակ վանքեր ունին, մեծ հարստութեանց տէր են:

Ձինաստանի մէջ ալ, ինչպէս ամեն երկրի մէջ, անկեղծ հաւատացեալք և բաղմնութիւն անտարբերք կը գտնուին:

Անտարբերութիւնը տեսակ մ'անփութութիւնն է հոգեւոր կամ մտային իրաց. հիւանդութիւն մ'է որ չեն խնամեր: Ամեն տեղ, ուր մարդիկ կան, անտարբերք կ'արտադրին: Բայց մեր բարուց մէջ չկայ կրօնական ատելութիւն. ինձ համար սարսափելի բան է: Կը հասկնամ որ ատեն... զիս, օրինակի համար. բայց կրօնական դադաւիար մը, կրօն մը:

Պալով անաստուածութեան, կ'ըսուի թէ արդի բաղադրակրթութեան արտադրութիւններէն մին է: Մեր տակաւին ըստ բաւականի բաղադրակրթեալ չենք, որպէս զի բնաւ հաւատք չունենանք:

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՓԵՈՒՐ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՌԱՄԿԱԿԱՆ ՏԱՂԵՐՈՒ

Կրօնական

Օհան Օհան Օսկերեան,
Քրիստոս անցաւ բանձր լեռան,
Ձէն տուից աշակերտաց,
Խունկ ծրխից վարդապետաց:
Մարիամ, քո՛ւն իս արթո՛ւն իս.
—Վըչ քուն իմ, վըչ արթուն իմ,
Էս գըշեր երած մի տիտի իմ.
Ժամկուջն եկաւ դոռէ ծեծից,
Ժամն էլաւ պարէ (1) ուղից,
Հեծաւ գնաց Ուրֆայ քաղաք,
Դըռնիք շինից երկրթէ,
Շերեր (2) քաշից պողպտէ,
Լուս—գերեզման լարեցին,
Քրիստոս մէջը պառկեցուցին,
Փշով արին հանիցին,
Բամպկով արին քաշեցին:
Ինկան ծառ պըտղացաւ,
Դանար (3) ժամիր կատրացաւ (4),
Չար սատանան հարացաւ (5):

Հա՛մբարձան արծին ուրիշ բոռա՜ծ
Վե՛հալի խաղէրէն մի քանին

Ա.

Վիճակ վիճակ օսկի կօճակ,
Մամիս բերիք եօթը կտրեճակ,
Եօթին—լէ մատտէ (6) մուճակ:

Բ.

Կոխից ցըւքին (7) թըռաւ թախթին
Աշխարհէ ցանկացաւ բաղդին:

Գ.

Բարձ բարձի վրայ,
Հրամն նրստի վրայ,
Հացիդ Աստըծէն կ'իգայ,
Ձուրիդ Աբրահամն:

Դ.

Վարի շուկան տաքուկ հացիկ

(1) Պարտը (2) Շամիուր (3) Դանար (4) Կատարեցաւ (5) Հեռացաւ (6) Կաշի (7) Տանեաց ծայրը:

Վերի շուկան գըզման (1) բամբակիկ,
Քրիստոս իր բերնով ըսիք
Էսի է քու ճակտի գրիկ:

Սերահարան

Տեղի (2) օլըտող է (3) լը՛ղ է,
Ձիթ (4) մընտիլէ տարաւ հովէ,
Պագնիմ զամղաներու (5) քովէ,
Տ'էկօ, խնծոր պագիկ մի տուր:

Այլ երգ

Ջուրը կիգայ հավուզներէ
Աստուած պըհէ արուսներէ (6)
Չոռնայ պառապէ
Մեռնի՛ պառապէ:
Ջուրը կիգայ կըրծիներէ (7)
Աստուած պըհէ կըրծիներէ
Չոռնայ պառապէ,
Մեռնի՛ պառապէ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԵՆՍԱ, ԱՍԻԴ, ԱՐՍԻՆ
ԹԹԶՆՈՅ ՎՐԱՅ ՍԱԿԱԻ ՏԵՍՈՒԹԻԻՆ

Աստուածաշունչ մատենին մէջ կան թուշ-
նոց երեք անուններ՝ Նէեսա, Ասիդ, Ար-
սին, որք ուսանող աշակերտաց հարցասի-
րութեան նստատակ եղած էին միշտ, բայց
անոր դիմացը միտք հանգուցանող պատաս-
խան երբեք ընդունած չէին: Գրոց բանքն
այնպիսի շարք մի ունին, որ այդ բառից
տակը խորհրդաւոր միտք մ'ունենալու կար-
ծիք տալով, զայն իմանալու հետաքրքրու-
թիւնը միշտ աւելցած էր. նոյն կարծիքի և
հետաքրքրութեան համար է, որ նաեւ հին
ժամանակ այդ թուշնոց վրայ այլ և այլ մեկ-
նութիւն տուողներ եղած են. իսկ բառա-
գրոց մէջ անծանօթ թուշնոց կարգէն հա-
մարած և կամ տարակուսելով մեկնութիւն
տուած: Անծանօթ թուշններ էին նաեւ
Յունաց Եօթանասնից հին թարգմանչաց և
Վուլկադայի լատին թարգմանչի. զի նոքա
այդ սեմական բառերու պատասխանող յոյն
և լատին բառ չգիտելով, պահեր են Նէեսա

և Ասիտա ձայներն, և մեկնիչք զանազան տե-
սակ թուշնոց անուններով ուղեր են զանոնք
բացատրել. և ոմանք համարձակեր են մին-
չեւ դազան և սողուն մեկնել զանոնք: Իսկ
միջինդարեան բորբոքած երեւակայութեանց
ժամանակ նաեւ առասպելախառն և անտա-
նելի մեկնութիւններ տուեր են՝ բնականէ
դուրս այլանդակ մտածութիւններ ստեղծե-
լով, որոց մին կ'ըսէ. « Ասիդ սողուն է սեւ
գունով, որ կը գտուի Փղշտացւոց երկրին
մէջ. այս սողունը ձուն բերնէն կ'ածէ, և
անկէ ծառ մի կը բուսնի »: Ուրիշ մէկը նոյն
ցնորից աւելի մարմին տալով և ամբողջա-
ցնելով, կ'ըսէ. « Առանց սերման երկու
իրա լինի ի նմանէ. սողուն է նա յերկրին
Փղշտացւոց սեւագոյն կերպիւ. Ասիդն
զձուն ընդ բերանն փսխէ, և բուսանի ծառն
որ կոչի Ասիթ (Դ և Բ գրոց տարբերու-
թիւնք), և անտի կենդանակերպի Նէե-
սայն. և ծառոյն ոստքն դործեն, և տե-
րեւքն են ոսկեգոյնք և ոսկեթելք »: Ըսել
կ'ուզէ թէ Ասիդ սեւագոյն սողուն մը կայ,
որ հաւկիթը բերնէն կ'ածէ, հաւկիթէն
Ասիթ ծառը կը բուսնի, և ծառէն ալ կ'ել-
լէ Նէեսա կենդանին: — Այս տեսակ հոգե-
ւորական առասպելները սովորաբար ճշնա-
ւորական միջնորդութիւն տակ հնարած գիտեր
ըլլալով, կ'երեւի թէ և այս չաղփաղփու-
թիւնը ծովային ճանապարհով մեր երկիրը
մտած է այն առեւտներն որ Ասորոց և Կի-
լիկեցւոց ծովեզերաց դուները կուսակի վրայ
բաց թողուած էին՝ ընդունելու ամեն գոյն
փակեղներու եղբայրներ, և անոնց հետ ի-
րենց դործարանաց մէջ արուեստական գը-
նորքներ: Պեռնաքուլայի ցնորքը այս պատ-
մուածին հետ փոքր մի նմանութիւն ունի:
Պեռնաքուլա ծովային փոքր բաղ է, որ
ոսարէի (Ֆրէս) մէջ կը ծնի՝ ըսեր են. —
թէ ոսարէները Սկովտիայի ծովուն մօտ բու-
սած ծառի մը ճիւղերէն դուրս կուգան.
թէ ոսարէներու երկու կեղեւներն՝ ինչպէս
թէ ծաղկի կոկոններ ըլլային՝ կը բացուին,
և անոնց մէջէն դուրս կուգան Պեռնաքու-
լա ըսուած փոքրիկ բաղերը: Հրաշայի ծառ
մի այսպիսի՝ որոյ ծաղիկները ոսարէ են և
պտուղները բաղ, Ուրսալայի բուսաբանա-
կան պարտիզին մէջ տեսնուած չէ: Այս տե-
սակ երազոց պառաւական խօսքեր աղէկ է-
ին երբեմն անհանդարտ ու ասուշ տղաքը:

(1) Գըզուած (2) Տանիք (3) Պալտող (4) Պառ-
մայ (5) Աստեր (6) Հարաներ (7) Մագիկ թաղար:

քննացուներու համար • տղայն զի դեռ մանուկ է, և ակամօյն մօտ պառաւի չնշածին խելքը չհասնիր, շատ մի հիանալով միտ դնելէն ետքը՝ գլուխը կը յոգնի և իքուն կ'ընկնի • բայց այժմ մանկութեան և քունի ժամանակը փոքր մի անցած ըլլալով, կը հասկանան մարդիկ, որ այսպիսի առասպելաց կարկատանք ա՛յլ եւս հանդուրժելի չեն :

ՆԵՆՍԱ ԿԱՄ ՆԵՆՂԱՍ

Նէհսա կամ Նէհղաս սեմական բառ մի ըլլալով, պէտք է որ մենք անոր նշանակութիւնը ուսանինք նոյն լեզուի վարժապետներէն, որոնցմէ մին Եռնէսդ Ռընան՝ զի սեմական լեզուաց գիտութեան մէջ է աշխարհաճանօթ և աննենդ գիտնական, և Գաղղոյ Ակադեմիայի կաճառակից, կրնամք մեք ամեն մեկնութենէ վեր դնել նորա հասկացողութիւնը • ահա սա Յոբայ գրքին միջի Նէհսա բառը կը թարգմանէ *օրբէշ*, որ է ջալլամն : Ջերմ անաղպատներու թըռչուն է այն, մեծղի և ծանրամարմին, որոյ գլուխը, նայուածքը, վզին բռնուածքը կողմնի նմանութիւն ունեւոյ՝ կոչեր են զայն *փէլէ ֆոշ* : Երկայն սրունքներ ունի և զօրեղ բարձեր • թեւերը մարմնոյն հատմատութեամբ շատ փոքր ըլլալով, չկրնար նա մարմնոյն ծանրութիւնը վերացունել ու բարձր թռչիլ • հապա երկու թեւերն արծակ բռնելով՝ ամեն քայլ առնելուն թեւերովն օդը կը ծեծէ, և առանց ոտքերը գետնէն կարելու՝ գետնի երեսին մօտէն՝ թեւերուն օդնելովը մեծ մեծ քայլեր կ'առնու, ու տաճիկ ուղտի հաւասար ճամբայ կ'ընէ : Թեւերն վայելուչ են ճերմակ ու հաստալող փետուրներով • իսկ գիտին ու գաւակին ամենաճոխ ու նուրբ փետուրներն, որ բարակ հովերով կը թռչնան, իրեն քաղաճքին կուտան գեղ և զուարթութիւն • իսկ նորա պոչին սքանչելի փետուրներն են այսօր գլխարկներու վայելուչ զարդարանք : Այս բնական կարգի թռչունին բնաւորութիւնը սա կերպով կը նկարագրի Յոբայ գրոց բանաստեղծական լեզուով • « Նէհսա իւր հաւկիթը գետնի վրայ կը թողու, հողի վրայ կը ջերմացունէ • կը մոռնայ թէ ոտք կրնան զայն ցրուել և անապատի դազանները կոխել : Հեռացաւ իւր ձագերէն՝ ինչպէս

թէ իրմէ չըլլային • շատ հոգ չըներ թէ իւր ցաւերն ընդունայն եղան, վասն զի Աստուած զրկեց զինքն խնամութենէ, և հանձարէ իրեն բաժին չտուաւ : Երբ ուզէ նա դնալ, կը բարձրանայ, և կը ծաղրէ դնայուն ձին ու անոր վրայի հեծնողը • Յոր ԼԺ. 15 : » Արդ այս Նէհսա անմիտ թռչունը բնական արարածոյ կարգէն է, և առասպելական բան չունի • բայց արդեօք քերդողական լեզուին պատճառաւը և կամ երբայական բառից հոմաճայնութեամբ այլ ընդ այլոյ հասկացուած է, թարգմանութիւնները մութ մնացած են, և Ասիդայն ալ Նէհսայի հետ չիոթած : Գրոց խօսքին մէջ կայ անշուշտ մթութիւն, բայց չկայ անհասկանալի բան, եւս առաւել մինչեւ ռամկական մեկնութեանց երթալու չափ պատճառ : Վկայութիւն վերոյիշեալ գիտնականի, և նկարագիր որով կ'ստորագրէ Յոբայ մատեանը՝ տարակոյս չեն թողուր որ զՆէհսա թռչունն հասկանալու է ջալլամն և ոչ թէ այլ անասկ թռչուն : Այժմ որ Նէհսա բառին ջալլամն կամ որ նոյն է *օրբէշ* նշանակելը պարզեցաւ, բազէ, տառերն, մարախ կամ ուրիշ ո՛ր և է տրուած բացատրութիւնքն ի բաց կը դնեմք, և բառագրոց կարգին մէջ ջալլամի նշանակութեամբ կը շատանամք :

ԱՍԻԳ ԿԱՄ ԱՍԻԴԱ

Այս ալ վերինին պէս սեմական բառ մի է, որոյ երբայեքէն Հասթա կ'ըսեն • յոյն և լատին թարգմանութիւնք նոյն ձայնը պահելով Ասթա ըսեր են, և մեր նախնիք Ասիդ կամ Ասիդայ : Անյայտ թռչնոյ անուն համարուած է և այս • անոր համար մեկնիչք արագիլ, յօշոտ, բազէ, կարապ, մարախ թարգմանած են, և մեր նախնիք մի անգամ Արաին : Յիշուած թռչուններուն շատը այլ և այլ կարգի հաւեր ըլլալով և նոցա կենաց սլայմանքն իրարու անման, անկարելի է որ ամենը մէկ Ասիդա թռչնոյ կարեւորն ստատախանել : Այս զանազան իմացուածներն չուտով կը կտրէ և կ'որոշէ վերի յիշուած գիտնականը, որ կ'ըսէ թէ Հասթա երբայեքէն կը նշանակէ *ֆիֆե* որ է արագիլ : Բայց զի Հասթա կը նշանակէ նաեւ արգար, գլխոտ, յառաջ եկած են անտի պէսպէս խնացողութիւններ : Հիմայ որ Ասիդ

կամ Ասիդա բառը արագիլ նշանակելը գիտենք, նայինք ինչ կայ Արսինի վրայ տեսնե՞լք, որ Ասիդի տեղը դրուած կայ միանգամ:

ԱՐՍԻՆ

« Արսին յերկինս ծանեաւ զժամանակ իւր » Է միմիայն վկայութիւն, որ Նրեմիայի մարգարէութեան Բ. 7 գլխոյն մէջ կը տեսնուի, և ըստ Հայկապետնի հասկացումն զիմացը դրուած: Նւ զի հիմա գիտեմք որ Ասիդա արագիլ կը նշանակէ, ապա և Արսին նոյնպէս նշանակելու էր, ինչպէս որ այդ բանին հաւանութիւն կուտայ և ինքն Հայկապետն:

Կերեւի թէ այս բառին ալ ճակատագիրը նախընթաց երկու բառերուն պէս դբօսանք ըլլալ է միջին դարու հեղինակաց, որոց մին աստղ կ'իմանայ զայն, ուրիշ մը արուեստակ աստղ առաւօտեան. իսկ Յովհաննէս Վանական վարդապետի հարցմանց գիրքը հասկացած է թէ Արսին թռչուն մի է, բայց առանց թռչնոյն տեսակը յայտնելու սա՛ կերպ կ'ստորագրէ զայն. « Արսինն թռչուն է օդաւանայ. հասակաւ և դունով և ձայնիւ որպէս սարիկ. ոտն կարճ է եւ ճանկն սուր, հետեւակ չկարէ երթալ, բարձր բոյն դնէ, և բարձր որսայ իւր կերակուր »: — Բայց զի սարիկ (հրաբեւեւ՝ բեւեւեւ), որ փոքր և հազիւ տատրակի չափ թռչուն մի է, չկրնայ յարմարիլ նորա մեծութեան չափը Ասիդայի (արագիլի), որ մեծ թռչնոց կարգէն է, այս մէկ արժանաւոր վկայութիւնն « Արսին յերկինս ծանեաւ զժամանակ իւր », բաւական է հասկացունելու, թէ բարձր և երկնից մօտերէն սահող և բարձրագոյն լեռներու վրայ թռտող թռչուն մի է, և որ ի դարնան և յաշնան երկրէ յերկիր չուելու ժամանակը զիտէ: Ուստի իմ կողմանէ՝ Վանականի մեկնութիւնը այս տեղոյն անյարմար գտնալով ընդ ունայն տեղ անոր վրայ միտք և գրիչ չեմ աշխատցուներ:

Բայց ես յոյժ կը պատուեմ Նրեմիայի մարգարէութեան քաջ թարգմանիչը, որ փոխանակ սեմական հասկացումն զիմացը Ասիդա դնելու՝ ինչպէս ուրիշ թարգմանիչը ըրած են, գիտացեր է զի պէտքուն է անոր Արսին արիական բառ մը:

Մեք այժմ Ասիդ բառին արագիլ նշանակելը ճանշնալով, և Արսինը անոր զիմաւորած, հարկ էր որ ըսէինք թէ Արսինն ալ արագիլ կը նշանակէ. բայց ի՞նչպէս կարող ենք վրստահութիւն ունենալ այդ բանին, երբ կը տեսնենք որ իրեն պէս ուրիշ քաջ թարգմանիչներ ալ ոմն բազէ, ոմն կարապ, ոմն արագիլ դրած են անխորաբար՝ առանց ճշդիւ գիտելու հասկացի բուն նշանակութիւնը. չկրնա՞յ ըլլալ որ նաեւ Նրեմիայի քաջ թարգմանիչը նոյն պատրանաց մէջ յաճի, և առանց իրը չատ ճշդելու Արսին բառ մի ի դորձ դրած ըլլայ երկմտութեամբ: Պէտք է ուրեմն մեր հաւատքը առ այժմ կոտոր մը չարիաւորենք, մինչեւ տեսնենք թէ քննութիւնը ո՞րչափ բան կը յայտնեն:

Ճշմարիտը խօսելով ես Արսին բառին լիակտուր բաղդատականը ուրիշ լեզուի մէջ գտած չեմ՝ բայց եթէ սլայմանաւոր կերպով: Կը տեսնեմ որ Արսին բարդ բառ է, և ունի երկու մասն ար-սին՝ երկու յատուկ նշանակութիւններով: Սին մասը կը բաղդատուեմ Հնդկաց « Էն » և Զանդիկ « ան » բառերու հետ. երկու լեզուաց մէջ ալ այս ձայնից տակը գնացող թռչունը բազէ և կամ մանաւանդ արծիւ մեկնած է, և երկուքն ալ դիւցապնական թռչուններ: Հրնդկաց Սինա երկնային դիւցապնութեան մէջ կարեւոր գիրք մը ունեցած է՝ օգնական լինելով Խնորայի և Ակնեայ, որք և երբեմն անմահական ըմպելեաց վրայ տիրանալու համար Սինա արծուին կերպարանքն մտած են: Նոյնպէս և Աւեստայի Սաէնա՝ արծիւ կամ բազէ թարգմանուած է: Ընդդէմ չէ որ Արսին բառին սին մասը սիէնա կամ սաէնա ձայնից հետ հաւասարելով, նշանակէ արծիւ կամ բազէ, բայց ոչ արագիլ, որ Ասիդայի զիմաւորած տեսնելով, վայրկեան մի կարծեցինք թէ նոյն կրնայ ըլլալ և նշանակութեամբ: Իսկ առաջին ար մասը յայտնապէս նշանակէ լեւոն, որով արսին բարդած բառը կ'ըլլայ լեւոն բազէ, կամ լեւոն արծիւ: Հետաքրքրական հատուած մի կայ Աւեստայի մէջ, ուր հա՛մ մեհենական բոյսին հոգեկան ու բժշկական զօրութիւնքը գովելով սապէս կը խօսի առ հոմա. « Աստուած ճարտարապետ կատարեալ եղ զքեզ բարեբար և իմաստուն ի ծայր բարձրութեան (հրեբէ) » անտի սրբազան հաւք

գուշակք՝ տարան զքեզ ի կոյսս կոյսս, ի կատար լերին հուսկ յԱրսին (Եֆեթիսաէն), ի ծայր Սգերա, ի զառիվերէն Քուսրա՝ ընդ բաղնուղին Բաւրանա՝ ի վերայ լերին սալի-տակադուռնի (սֆէրէիսաէն)։ Նազնա Ժ. 27 »։ Առանց այս բանից այլաբանական մտքին վրայ խօսք ընելու, կը տեսնեմ որ Եֆեթիսաէն կը բաղնատի ընդ Արսին, և Եֆեթիսաէն հուսկ յԱրսին, այսինքն մօտ այն տեղւոյն ուր Արսին բնակէ, լերան ծայրագոյն բարձրու-թիւնը, և ուր հասած է հոմա բոյսին զօ-րութիւնը։ Իսկ ուրիշներն այս եռաբարդ Եֆեթիսաէն բառը թարգմանած են՝ ի ծայր լերին ուր Սաէնա թառի։

Կարծեմ թէ ասով Արսին բառին բուն նշանակութեան հետքը սկսանք գտնել. բայց մէկ վկայութիւն Աստուածաշունչ մա-տենէն և մէկ վկայութիւն Աւետարայի մա-տենէն բաւական չեն ամբողջական վստա-հութիւն ազդելու, և դրականապէս հաս-տատուել թէ Արսին կը նշանակէ արծիւ կամ բազէ և ոչ այլ ինչ։ Անոր համար առ այժմ գէթ արագիւ մեկնելէն միայն զգու-շանալով, նշանակութիւնը պահելու եմք ի մէջ արծուի և բազէի, մինչեւ նոր լոյս մէկ կողմէ ծագի։

Հոս կ'աւարտին Նէեսա, Ասիդ և Արսին թուշնոց վրայ իմ տեսութիւնը. բայց զի զա-նոնք բացատրելու համար ի նախնեաց դոր-ծածուած կան երբեմն տառերն և մարախ բառերը, կը հարկաւորիմ. զոյգ մի բան ա-նոնց վրայ յաւելու։

ՏԱՌԵՂՆ յունարէն Բելաթիս բառին, և դարձեալ Ասիդային դիմացը դրուած ըլլա-լով ի նախնեաց, արագիւ նշանակելը ապա-հով պէտք էր ըլլալ. եւս առաւել այժմ որ Ասիդային ալ արագիւ նշանակելը յայտնի եղաւ։ Բայց բաղնատութիւնը այդ բան չեն հաստատուեր։

Տառերը բաղնատեցի եւ Ջանդիկ Վա-րաշա բառին հետ։ Հնդկաց Վ դիրը ի մեր փոխուիլը անսովոր չէ, անոր համար այս երկու բառից բաղնատութիւնը կարե-լի կը գտնեմ։ Վարաշնա թուշուներ երկու անգամ կը ներկայանայ Աւետարայի մէջ, ուր սապէս կը նկարագրի. « Վարաշնա ի վեր կը բարձրանայ. (մարմնայն) վերի մասամբը կը վնասէ, թուշնոց մէջ ամենէն արագն է,

և շարժուն արարածոց մէջ ամենէն թեթեւ։ Ամեն կենդանեաց մէջ նա է, որ լեզուով ըն-թացքը կը բանայ, և իրեն նման չկայ (թու-չուն), որ լծուած քաջ երիվարի շալի սու-րայ. կուգայ խնդութեամբ առաջնածագ-լուսով արշալուսոյ՝ ըզձալով որ գիշերն ըլլայ առանց խաւարի, և առաջին նսեմ այգն ըլ-լայ պայծառ ինչպէս արեգակն։ Քերէ կ'անց-նի բլրոց կողերէն՝ լերանց ծայրերէն՝ ձորոց կիրճերէն՝ ծառոց ծայրերէն՝ ըզձանալով լը-սել թուշնոց ձայն»։ Նշտ. ԺԴ. 19-21։ Այս նկարագրին նայելով բազէ կամ արծիւ կը մեկնեն թարգմանիչը զվարաշնա թուշունը, զոր մեր տառերին հետ նոյնացնելու ար-գելը մը չտեսայ։ Իսկ վարաշնա ձայնին ներքին ստուգաբանութիւնը պոչով դարձող կը մեկնուի, որ յատկութիւնն ալ արծուի՝ եւս առաւել բազէի բնութենէն օտար չէ։ Ուստի կ'երեւի թէ մեր տառերն աւելի ար-ծիւ կամ բազէ հասկանալու է քան թէ ա-րագիւ։ Այս ետքինը թերեւս բաղնատի աբիլիս ձայնին հետ։

ՄԱՐԱՆ. — Ոսկեփորիկ մը Նէեսայի վը-րայ խօսելով կ'ըսէ թէ Ակիւղաս զՆէեսա բառը (զոր գիտեմք այժմ թէ Չայլամն կը նշանակէ) թարգմանած է Մարաի։ Չունիմ ես հոս դիւրութիւն քննելու թէ Ակիւղա-սայ օրինակագրին մէջ ինչ ձայնով դրուած է այն. եթէ մարախ ձայնն ունի, կ'երեւի թէ պէտք չէ զայն շփոթել սովորական մա-րախի հետ որ մերեւս կամ չեթեթէ կը նշա-նակէ. զի կրնայ այն յառաջ եկած ըլլալ Սանաքրիտ մարաի բառէն որ բազէ կը նշա-նակէ։ Ըսել թէ « Ակիւղաս զՆէեսա մա-րախ թարգմանեաց », կը նշանակէ Ակիւղաս զՆէեսայն բազէ հասկացաւ ու թարգմանեց։ Մարաքա ստուգաբանօրէն սպանիչ, կորու-սիչ նշանակելովը, կրնայ յարմարիլ թէ՛ բա-ղէի բնութեան և թէ՛ սպականիչ մարախ միջատին։

Ազգային մատենադարանը դեռ բաւա-կան չէ այսպիսի պարագայից մէջ օգնակա-նութիւն մատուցանել։

ՍՏԵՓԱՆՈՍ ԵԱԶԸՃԵԱՆ

Վ Ե Պ

ՄԱՏԼԵՆԻ ՄԵՂՔԸ

Դ.

(Շարունակութիւն Տես թիւ 3735)

Անմիջապէս սկսայ ճանբորդութեան պատ-
րաստութիւններս, բայց առանց սենեակէս
ելնելու: Լուիզ հետս էր. կը վախէի որ
չըլլայ թէ Բոպէր խնդրէ զիս տեսնել, և
այնպէս ալ եղաւ, որուն համար գոհ եմ
իրմէ:

Այսպէսով սեպտեմբեր 2ին հասանք.
որոշուած էր որ մի և նոյն երեկոյին Բոպէր
և Լուիզ Վիլֆէրնիէն պիտի մեկնէին և ինձ
պիտի սպասէին ի Բարիզ, ուր յաջորդ ա-
ռաւոտուն հօրեղբորս հետ պիտի երթայինք
և իրենց պիտի միանայինք: Երկու օր ետքն
ալ Իտալիա պիտի չուէինք: Հետեւաբար
միայն քանի մը ժամ դեռ ունէինք Վիլֆէր-
նի անցընելու, և Լուիզ ալ զիս թախանձեց
որ վար իջնեմ, և այս վերջին օրը ընտան-
եաց մէջ անցընէնք: Ճանբորդութիւնս այն-
չափ մօտալուտ էր որ բաւական զօրութիւն
զգացի Բոպէրը կրկին տեսնելու և Լուիզին
թախանձանաց տեղի տալու: Երբ սրահը
մտայ հօրեղբորս թեւին կռթնած, պատու-
նին առջեւ նստեր էր իմ ասղնեղործի կար-
կահիս առջեւ և զբաղեալ մտօք կը ձեռնո-
տէր մետաքսները: Ոտնաձայնս առնելով՝ գը-
լուխը վերցուց:

Հասայ՝ կուրծքն հպարտութեամբ զրա-
հաւորեալ. միտքս դրեր էի միմիայն մեկ-
նելուն համար ուրախութիւն ցոյց տալ,
մինչեւ այն աստիճան՝ որ հասկնալ կարծա-
ծին վրայ սկսէր տարակուսիլ: Հօրեղբայրս
դէպի Բոպէրին գտնուած պատուհանին առ-
ջեւ զիս տարաւ և մեծ թիկնաթուրի մը
վրայ զիս հանդէսցուց:

Երբ նստայ և Լուիզ առձեռն պատրաստ
ինձ համար կարգի դրաւ գիրքեր և ասղնե-
ղործս. — Լաւագոյն ես, հարցուց Բոպէր.
բայց ճանբայ ելնելու համար դեռ չատ տը-
կար կերեւաս:

— Երեւցածէս աւելի ուժով եմ, պա-
տասխանեցի բաւական հաստատ ձայնով մը,
միւս կողմանէ օգտախոսութիւն և տիրու-
պիտի կազդուրեն զիս ընդհուպ... Եւ նա-
յին մեծ արշաւանքներ պիտի ընենք, հօր-
եղբայր իմ, այնպէս չէ՞:

— Ութ օր չանցած՝ Մատլէն Մօն-Պլան
պիտի ելնէ մագլցի, պատասխանեց հօրեղ-
բայրս ժպտելով:

Ամենքնիս մէկտեղ սկսանք Ալպեանցմէ
անցնելով յիտալիա ճանապարհորդութեանս
քարտէսը դժեւ. ըստ մեր կանխաւ որոշման
այլ և այլ քաղաքներ անցընելիք ժամանակ-
նիս հաշուելով՝ ամիսէ մ'առաջ Նաբոլի չը
պիտի կարենայինք հասնիլ:

— Յետոյ ի՞նչ պիտի ընէք, հարցուց Բո-
պէր տատամեղով:

— Յետոյ, ըսաւ հօրեղբայրս, Մատլէն
կ'ուզէ զիս տանիլ Ասիա, Ափրիկէ, դեռ
ի՞նչ գիտնամ ուր որ արեւը կը ցոլայ: Նոյն
խիւ աշխարհիս չըջանը ընելու ի՞նչ արդելք
կայ:

— Մեզի հրաման կուտա՞ք գոնէ, ըսաւ
Լուիզ, գալ ձեզ հետ գրկախառնիլ ի Նա-
բոլի, դէպ արեւելք չը թուած:

— Տեսնենք, եթէ խելօք կենաք, պա-
տասխանեց հօրեղբայրս մեկնելով, իւր ա-
ռօրեայ շրջագայութիւնը ընելու համար: Բո-
պէրին ալ առաջարկեց իրեն ընկերիլ, բայց
նա մերժեց:

Լուիզ չափազանց զբաղած իմ ճանբու
վերջին պատրաստութիւններս ընելու, ինձ
յոգնութիւն չտալու համար կ'երթար, կու-
ղար, հրամաններ կուտար, առանց դադ-
րելու մեզի հետ խօսակցելէ: Բայց ատեն
մ'եկաւ որ պարտաւորեցաւ իւր սենեակը
ելնել քանի մը նամակ գրելու համար, և
Բոպէր ու ես առանձին մնացինք: Մեր շուր-
ջը՝ արեւուն ճառագայթեալ նշուկից մէջ
փոքրիկ միջատներ ուրախ զուարթ կը բզզէին,
սղգային և երկնից խորութիւնք աշնան մեր-
ձենալովը կարծես թէ գունաթափեալ վըս-
տահութիւն և անդորր կ'ազդէին:

— Ե՞րբ նորէն պիտի տեսնուինք, մըր-
մընջեց Բոպէր:

— Բայց... վաղն իսկ, պատասխան
տուի ժպտել փորձելով:

— Այո՛, և յետոյ:

Չը կրցի պատասխանել տխրութեամբ

ինձ կը նայէր՝ առանց աչքը դարձնելու . կարծես թէ մի առ մի դիմաց դժագրու-
թիւններս կ'ուզէր քանդակել իւր յիշողու-
թեան մէջ :

Պատշգամը դարդարող ծաղկանց մէջ ա-
նուշահոտ թուփի մը ծառէն ճերմակ և կար-
միր փունջ մը ծաղկանց՝ թռուցիկ զեփիւռին
չնչով իւր յենարանէն բաժնուած և իւր տը-
կար բունին վրայ մեղմիկ ճօճելով՝ կիսաբաց
պատուհանին առջեւ կը ծածանէր : Բոպէր
ինձ նուիրեց զայդ, ձեռքս երկնցուցի որ
առնուիմ . մատուրներէս բռնելով երկայն
բարակ զննեց . կարծես թէ ցանցատեսակ
կապոյտ երակացս վրայ նայելով՝ ինքնիրեն
տխուր հարցման մը պատասխանը կը բըն-
տըռէր . յետոյ յանկարծ դէպի ինձ ծռելով,
— Ուրեմն զիս կը սիրէիր, Մատէն, և կեր-
թաս, և յաւիտեականաբար իրարմէ կը
բաժնուինք . . . :

Եթէ ուրանալ և բողբել իսկ կամենայի՝
սառուցեալ շրթունքս թող չպիտի տային .
բայց յայտնի կը տեսնէի որ գաղտնիքս թա-
փանցեր էր, հետեւաբար անողուտ էր զայն
պարտըկել . քաշեցի ձեռքս՝ զոր դեռ բըռ-
նած էր, և անով երեսս ծածկեցի :

— Ինչո՞ւ երեսդ կը դարձնես, ինչո՞ւ
ինչ արցունքներդ կը ծածկես . ինչ օգուտ
ալ զիեզ խաբել : Ա՛հ, ինչ անտեղի քաջու-
թիւն էր որ ունեցար, ինչո՞ւ համար ամե-
նայն ինչ անդարմանելի վիճակի մէջ չմտած
չի խօսեցար : Այնքան երջանիկ պիտի ըլլա-
յինք . . . այնչափ զբեղ սիրեցի . . . եթէ
զիտնայիր զբեզդ ո՛րչափ կը սիրէի՝ չէիր հա-
մարձակեր անշուշտ ընելու զոր ինչ դործե-
ցիր : Ա՛հ, անդուծ և պաշտելի դու էակ՝
ի՞նչ անծանօթ Աստուծոյ զոհեցիր մեր եր-
կուքնուս ալ կեանքը . ի՛նչ սնտոփ փառա-
սիրութիւն հրապուրեց զբեզդ ու թակար-
դեց :

Խոնարհած, ծնդացս փարած էր, ևս
կուլայի . արցունքներս հանդարտաբար կը
զեղուէին իբր յորդահոսան աղբիւրէ և կա-
թիլ կաթիլ իւր մաղբոուն վրայ կը թափէին :

— Երբ միտքս կը բերեմ թէ պիտի եր-
թաս, շարունակեց նա, և թէ զբեզ ա՛լ չի
պիտի տեսնեմ, և զիեզ իրարմէ զատող ան-
դունդին վրայ՝ բացակայութեան դառն
վիշտն ալ վրան կ'ուզես յաւելցնել, կ'ու-
ղէի անիծել զբեզ . . . : Այն օրը որ ինձ ը-

սիր թէ ուրիշ մը կը սիրէիր, այնպէս կար-
ծեցի որ աշխարհիս վրայ նմանօրինակ տան-
ջանք մը չպիտի ունենայի . բայց կը խաբ-
ուէի : Յետոյ երբ կամաց կամաց պարզուե-
ցաւ, երբ կիցկտուէր բառեր ցնորմանցդ պա-
հուն բերնէդ փախչելով, ինչ զատ ու է
անծի անհասկանալի, քու զիւցաղնական
խեղութիւնդ ինձ ճանչցուցին, և յետոյ
երբ ցառոց մէջ գեղեցկութեանդ թառա-
միլը տեսայ, երբ քու մեծութեանդ և մա-
նաւանդ քու տկարութեանդ չափը առի, այն
ատենն է, Մա՛տէն, որ խմացայ թէ տանջը-
վիլ ի՛նչ ըսել է : Եւ պարտաւորեցայ լռել .
յուսահատութիւնս սրտիս խորը թաղեցի,
երկինք վրայ, կ'ուզէի քեզի արժանի ըլլալ :
Եւ այս վայրկեանիս ալ գիտե՞ս ինչու համար
կը խօսիմ, Մա՛տէն, վասն զի զօրութիւնս
սպառեցաւ, արիութիւնս ալ յաղթուեցաւ
իբրեւ զբոյդ . կը պաշտեմ զքեզ և սակայն
պիտի կորսնցնեմ զքեզ . . . : Ա՛հ, թողը՛նք
զոնէ միանգամ մեր արցունքները և սրտերը
իրարու խառնուին . . . Մատէ՛ն, զիս շատ
սիրեցիր, այնպէս չէ՛ :

— Բո՛պէր, գիտ՛ ինձ, դոչեցի ցառա-
դին, վատ մ'եմ ես, բայց իմ տկարութիւնս
քեզի իբր զէնք մի՛ դործածեր վրաս ունե-
ցած քիչ մը համարմունքս ալ ինքզինքէս վեր-
ցնելու : Թո՛ղ առանց խղճի մտաց՝ մեկնիմ
այս տունէն : Այս ժամուս յիշատակը մի
գուցէ օր մը Լուիսին և իմ մէջտեղս ելնէ
կանգնի . . . քու պատուոյ զգացմանցդ կը
դիմեմ . . . :

Առդէի իւր գրկածութենէն փախչիլ,
բայց զրեթէ բռնի զիս կաշկանդած էր : — Մի՛
մերժեր զիս, կ'ըսէր, մեծ է իմ յարգանքս,
միթէ երբէք քեզի թշնամանական բառ մը
արտասանեցի՞ . կենացս ամեն վայրկեանին
միթէ իմ վրաս չի բռնացայ, նայուածքիս
մէջ պաղութիւն, ժպտելուս մէջ անտարբե-
րութիւն միթէ չի ցուցուցի՞, և մինչեւ այն
աստիճան որ՝ նախանձեցար դո՛ւ, խեղճ
աղջիկ : Ա՛հ, մի ուրանար, ժամէ ի ժամ
ամեն բան կարդացի, ամեն հեծութիւն-
ներդ լսեցի, և օր օրէ ինձ աւելի սիրելի
սիրելի եղար դու . . . թո՛ղ զիս վայրկեան
մը քու ոտիցդ առջեւ . մի նախանձիր ինձ
այդ տխուր և յետին և միմիայն երջանիկու-
թիւնը որ կրնաս ինձ հայթայթել, և ես
քենէ կ'ուզեմ խնդրել :

— Յանուն Աստուծոյ, թո՛ղ զիս Րոպէր, չե՞ս լսեր պատշգամբին վրայ մէկը կայ . . . :

Վախէս, դոյնս նետած ոտք ելայ որովհետեւ պատուհանին մօտ տեղեւոց խշրտուկ մը կարծեցի լսել, միանգամայն վարադուրին վրայէն ստուերի մը անցքը տեսնել :

— Մարդ չիկայ, կը խաբուիս, ըսաւ Րոպէր, ստիպելով զիս կրկին նստելու :

— Եւ սակայն ձայն մը եկաւ ականջիս, կրկնեցի ես սոսկամբ, եթէ Լուիզն էր, Աստուած իմ, կամ թէ ծառայից մէկը . . . :

— Սիրելի փախուկ, ի՛նչպէս ալ կը դողաս ըսաւ, զիս հանդարտեցնելու համար աչք պտըտցնելով ամբողջ պատշգամբին վրայ, արդէն ըրածդ ի՛նչ էր . . . հողիդ մաքուր է երկնքին պէս :

— Բայց դու ոտիցս առջին էիր, Րոպէր :

— Ի՛նչ կը վախես . դղելիս այս կողմը երբէք մարդ չի գտնուիր այս պահուս : Հապա՛, ժպտե՛ ինձ տեսնեմ . այդ ահաբեկ նայուածքդ զիս շատ կը վշտացնէ . մոքեդ անցուցի՛ր երբէք, Մա՛տէն, օր մը պիտի գայ որ՝ անվտանգ կարենանք զիրար տեսնել, յորում մեր սիրտերը արդէն ծերացած պիտի ըլլան : Վարձես որ հնարի՞ն բան է այդ, ըսէ՛ . ստուգիւ կրնա՞ս հաւատալ որ առանց դողալու իրարու ձեռքը երբէք պիտի կարենանք սեղմել, և նաւաբեկութենէ ձողալրած երկու ճամբորդներու պէս՝ մեր անցուցած կենաց միջոցները իրարու պատմել : Ա՛հ դու բնաւ չես յուսար զայդ, այնպէս չէ՞, Մա՛տէն . և իրաւունք ունիս ինչ փախչելու . կենակից ըլլա՛լ առանց կողակից ըլլալու, կարելի՞ բան է . ժամանակ մը դեռ պիտի մաքառէինք, վերջապէս օրին մէկը գրեզ գիրկս առած մեր կիսավայրենի երկիրը պիտի տանէի, մեր անտառաց խորերը թաւուտներուն մէջ ծածկելու համար իմ երջանկութիւնս . . . ա՛հ, Մա՛տէն, ի՛նչ երազ, եթէ ժամանակ ըլլար դեռ . . . :

Շարունակեց այս ոճով խօսելու, մերթկէս մը հանդարտած, մերթ բուն բնաւորութենէն յափշտակեալ, համայն այնպէս՝ համակամեալ մեր անողք բաղդին :

Երեկոյ եղաւ, ընթրեաց ժամը հասաւ, հօրեղբայրս չէր դարձեր . ուշ ատեն գնացեր էր, ըսաւ մեզի սենեկապանը, և յանձնարարեւ էր որ իրեն շքսպասեն սեղանի նստելու, որովհետեւ նոյն երեկոյին կարե-

ւոր գործ մ'ունէր կարգադրելու : Բիէր չի կրցաւ ըսել թէ որ կողմէն գացեր էր, և քիչ մը զարմացանք այդ կարեւոր գործին վրայօք որ այսպէս յանակնկալս զնա մենէ կը հեռացնէր :

Գիտեմք որ Լուիզ և Րոպէր նոյն օրը երեկոյին Բարիզ պիտի երթային. Լուիզ շատ տխուր էր հայրը չտեսնելուն, և զինքը չի գրկած Վիլ-Ֆէրնիէն մեկնելուն : — Ծանր ընդդիմութեան մը պատահած պիտի ըլլայ անշուշտ, ըսաւ ինձ կառք հեծնելով, յանդիմանէ՛ զինքը իմ կողմանէս . . . վաղը՝ կը տեսնուինք, Մա՛տէն, յաւելցուց երբ ձիերը սկսեր էին արդէն արշաւաստյր ընթանալ փոքրիկ ձերմակ ձեռքովը վերջին համբոյր մը ինձ դրկելով : Խեղճ սիրուն Լուիզ, մոքէն չէր անցնէր և ոչ ալ ես թէ յիրաւի յետին անգամն էր որ գրկախառներ էինք իրարու և թէ ես զինքը ա՛լ չպիտի տեսնէի բնաւ :

Երազացնոր աչօք, երկայն ատեն իւր հետքը դիտեցի, նոյն իսկ կառքը պարտիզին ծամածուռ արահետներուն մէջ անբեկեւութեամբ վերջն ալ, ականջ դրի ընդ երկար ու լսեցի տակաւ առ տակաւ հեռալուր անեղ շաչիւնը և սալտսմալ ձիոց դուրիւնը . երեկոյեան զովութիւնը և գիշերուան լուսութիւնը զիս դրդեցին վերջապէս ներս քաշուելու : Շատ ուշ ատեն սպասեցի հօրեղբօրս, բայց նա չի դարձաւ . անով միտքս գրաւուած էր, թէ եւ բնաւ իւր բացակայութենէն յառաջ գալիք վերահաս արկածին կասկածն անգամ չունէի : Երբ յուշնութիւնը ստիպից զիս ընկողմանելու՝ սենեկապան կնոջ պատուիրեցի՝ հօրեղբայրս գալուն պէս ինձ խնայ տալ : Անմիջապէս քունս տարաւ, և չգիտեմ թէ երազիս մէջ էր թէ իրօք իրեն վերադարձը լսեցի, բայց երազ և էականութիւն իրարու խառնուեցան և քունս այնչափ խորին էր որ չկրցի սթափիլ : Աստուած ինձ պարգեւեց անցելոյն վշտաց և արթնութեանս ինձ սպասող ծանր հարուածին մէջ տեղ այդ դադարն ու հանգիստ կարճատեւ :

(Շարունակելէ)

ԲՕԼ ԱԼՊԱՆ

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ծ

ՇԱՔԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ

14-21 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Շաբթուս կարեւորագոյն լուրն է ե-
գիպտական պարտուց գլխավճարին դա-
դարումը, խտիվին հրամանաւ : Այս լուր
ո՛չ միայն երմտական, այլ և քաղաքական և
իրաւաբանական կարեւորութիւն ունի : Դա-
դարեալ գլխավճարը սահմանուած էր 14
տէրութեանց միահամուռ որոշմամբ, և հա-
մազգային օրէնքի մը մասը կը կազմէր : Ե-
գիպտոսի կառավարութիւնն ինքնին կ'եզծէ
այս օրէնք : Անգլիա և իտալիա կը հաւա-
նին, բայց միւս մեծ Տէրութիւնք կը բողո-
քեն թէ՛ անհատապէս և թէ՛ հաւաքապէս :
Եգիպտոսի մէջ կար մեր Վեց Անուղղակի
Տրոց Վարչութեան նման եւրոպական խառն
վարչութիւն մը, « Ընդհանուր Պարտուց
Սնտուկ » անուամբ : Նուպար փաշա գրով
բացատրած է այս վարչութեան թէ, խտի-
վին կառավարութեան դանձուքն մէջ 352
հազար ոսկի միայն կայ 550,000 ոսկւոյ ան-
հրաժեշտ ծախուց փոխարէն, որով 198,000
ոսկւոյ բաց մը կերեւի : Հոկտ. ամսոյ մէջ
կառավարութեան հասոյթք կը հաշուին 220
հազար ոսկի ընդդէմ 253,000 ոսկւոյ ծա-
խուց, ուստի դուշակելի է 33,000 ոսկւոյ
նոր բաց մը : Բոլոր բացն այս տարի 231,000
ոսկւոյ կը հասնի : Նախարարութիւնը չի
կրնար գտնել նոր հասոյթներ, և որովհետեւ
չէ կարող նաեւ ծայրայեղ միջոցի մը դիմել,
այսինքն դադրեցնել պաշտօնէից թոշակներն
և կառավարութեան ընթացիկ ծախքերը,
ո՛չ ալ դադրեցնել Բ. Դրան հաշուոյն վը-
ճարուած տարեկան հարկն, ուստի կը հար-
կադրի այս նոր միջոցին դիմել : Թէեւ Նու-
պար փաշան է որ կը փաստաբանէ զայս տնօ-
րինութիւն ի դիմաց իւր կառավարութեան,
սակայն յայտնուած է թէ Լորտ Նորթպրուք
Եգիպտոսի երմտական վիճակը քննելով, ու-
րիշ միջոց չէ գտեր երկիրը մօտալուտ սնան-
կութենէ մը ազատելու և արդար դատեր

է որ Եգիպտոսի արժէտեարք քիչ մը ժա-
մանակ գրկուին իրենց փոխատուութեանց
մայր դումարն ստանալէ և շատանան լոկ
տոկոսով : Հետեւապէս գաւառաց կառա-
վարիչներուն, մաքսատանց վերատեսչին և
Եգիպտական երկաթուղեաց եւրոպական
վարչութեան իմաց տրուած է որ Պարտուց
սնտուկին յատկացեալ հասոյթներն առ այ-
ժըմ ուղղակի երմտական նախարարութեան
զրկեն :

Եգիպտական նախարարութեան գիրն
ստանալով « Ընդհանուր Պարտուց Սնտու-
կին » եւրոպական վարչութեան անդամք,
բողոք բարձին պաշտօնապէս : Այս բողո-
քագրոց յաջորդեց Ֆրանսայի, Աւստրիոյ, և
Գերմանիոյ դործակատարաց հաւաքական
մէկ բողոքն, որով խնդիրը մտած է քաղա-
քական առկախ խնդրոց կարգին մէջ :

Սեպտեմբեր 28 թուով հեռագիր մ'ալ կը
ծանուցանէ թէ. Ֆրանսայի, Գերմանիոյ, Ա-
ւստրո - Հունգարիոյ և Ռուսիոյ ներկայա-
ցուցիչները նոյն օր համանման ծանուցագիր
մը ներկայեր են նախարարապետ Նուպար
փաշայի, որով վերոյգրեալ տէրութիւնք կը
յայտարարեն թէ չեղեալ կը նկատեն Եգիպ-
տական նախարարութեան առած որոշումն
ի մասին Ընդհանուր Պարտուց գլխավճարին
առժամեայ դադարման :

Նոյն օր ժողով' մը դումարեցաւ Գահիրէի
անգլիական հիւպատոսարանին մէջ՝ Եգիպ-
տոսի երմտական գործոց վրայ խորհրդակ-
ցելու համար : Լորտ Նորթպրուք, Սըր Պէյ-
րինկ, Նուպար փաշա, երմտական նախա-
րար Մուսթաֆա Ֆէհմի փաշա և Պիւմ փա-
շա ներկայ գտնուեր են :

Կ. Պոլսէ առ Թայմը ուղղեալ հեռագրոյ
մը նայելով, անգլիական կառավարութիւնն
յարգելով կայսերական կառավարութեան
վեհապետական իրաւունքները, Բ. Դրան
հաղորդեր է այն պատճառներ որով պար-
տաւորուած է դադրեցնել Եգիպտոսի Ընդ-
հանուր Պարտուց գլխավճարն, և յոյս յայտ-
ներ է թէ Օսմանեան կառավարութիւնը պի-
տի հաւանի և ոյժ պիտի տայ բացառիկ
տնօրինութեան մը, զոր խնդիրն ի գործ
դնել պարտաւորեցաւ վարչութեան ընթա-
ցիկ պիտոյքն հոգալու համար :

— Լորտ Նորթպրուք մինչեւ անցեալ
չարթու վերջը պիտի մնար յԱլեքսանդրիա :

Այլ դրադէր տեղեկութիւններ հաւաքելու դատարանաց, վաճառականութեան և տրոց բաշխման ու հաւաքման վրայ, և այս նպատակաւ բազմութիւն անձեր հարցաւորածած էր : Ծովակալ Հէյ իւր նաւախմբով Ալեքսանդրիա հասեր է : Նաւատորմին նաւաստիք և մակոյկները պիտի օժանդակեն Նեղոսն ի վեր երթալիք զօրախմբին : Լորտ Նորթսթրոմը սեպտ. 24ին աչքէ անցուցեր է Ալեքսանդրիոյ ոստիկանութիւնը :

— Զօրավար Լորտ Ուոլթի սեպտ. 28ին մեկնեցաւ Գահիրէէն, Նեղոսն ի վեր գնացող զօրախմբին հետ միանալու : Շոգենաւ մը 10,000 ոսկի տարած էր անգլիացի զօրավարին :

— Խարդու մի ֆրանսական հիւսպատոսէն եկած հեռագիր մը կը հաստատէ թէ քաղաքին պաշարումը վերցած է և չընկայք մաքրուած են ապստամբներէն : Միւս կողմէ Մէհտին լսելով Կորտոնի յաջողութիւնները, նոր զօրք սկսեր է զրկել Խարդու մի վրայ :

— Այժմ Եգիպտոս գտնուող անգլիական զօրաց թիւը 13,559 մարդէ աւելի չէ, յորս 691 հիւանդք կան :

— Պէյքըր փաշա Ալեքսանդրիոյ մէջ վերսկսած է վարել Ոստիկանապետութեան պաշտօնը :

— Պեճիոյ թաղաւորը վերջապէս հաստատեց կղերամիտ կուսակցութեան շինած դպրոցային օրէնքն, որ այնքան յուզում կը պատճառէ երկրին մէջ :

— Վէստֆալիոյ կաթոլիկ ազնուականութիւնը դիտաւորութիւն ունէր Վիլհէլմ կայսեր ուղերձ մը ներկայացնելու, ի Գերմանիա կաթոլիկ եկեղեցւոյ կացութեան բարեօրոշմը խնդրելու համար : Վիլհէլմ կայսրը չուզեց ընդունիլ :

— Սըանտարտ քաղաքի Վիլհէլմի թրդթակիցն արժանահաւատ աղբիւրէ խնայեր է թէ ի մօտոյ Ռուսական Բոլոնիոյ մէջ պիտի հաստատուին Զեմլաքներ, այսինքն տեղական երեսփոխանական ժողովներ, տեղական խնդրովք դրադելու պաշտօնով : Բոլոնիէնը պիտի ընդունուի դպրոցաց և դատարանաց մէջ : Ռուս և Բոլոնիացի բոլոր քաղաքային կառավարիչք և Քիէվի և Վիլնայի կուսակալք Զարին հրամանաւ Վարչաւի պիտի երթան՝ Կուրքօ զօրավարին նախադաշնութեամբ տեղի ունենալիք խոր-

հըրդակցութեան մը մասնակցելու, և ծրագիր մը պատրաստելու համար, յորում պիտի ամփոփուին այդ մոռք Բոլոնիոյ մէջ լինելիք բարենորոգումները :

— Սերպիոյ կառավարութիւնը Բարիզի և Վիլհէլմի սեղանաւորական տուներէն մէկ միլիոն անգլիական ոսկւոյ նոր փոխառութիւն մը կը կնքէ :

— Շանկայէ եկած հեռագրական տեղեկութեանց նայելով, Գուրպէ ծովակալին գործողութիւնը մօտալուտ կը նկատուի. պիտի գրաւէ և միացնէ Քէլունիի (Ֆրանսիա կղզի) նաւահանգիստն և ածուխի հանքերը : Ֆրանսա բաւական գրաւական մ'ունենալով այսպէս, համբերութեամբ պիտի ըստէ Զինատանի որոշմանց :

Ըստ վերջին հեռագրոց, Զինատան խաղաղութիւն խնդրելու միտեալ է :

Ն Ե Ր Ք Ի Ն

Գուրպան պայրամի տօնի հանդէսն երեքշաբթի առաւօտ մեծ շքով կատարեցաւ Պէլիկթաշի մզլիթին մէջ, հակառակ դժնդակ օդին եւ յորդահոս անձրեւոց : Յետ կրօնական արարողութեանց, նախարարարք, և բոլոր քաղաքային, կրօնական և զինւորական մեծամեծք Տօլմա Պաղչէի պալատն համախմբելով՝ Նորին Կայսերական վեհափառութեան ներկայացան ի շնորհաւորութիւն :

Այս արարողութեան ժամանակ Օդոստ Սուլթանը դառնալով առ իւր անձնական դանձուն նախարարն՝ վսեմ. Յակոբ փաշա Գալապեան, բարեհաճեր է մեծարել զՆ. վսեմութիւնն, հանդիսապէս հռչակելով Վիլհիլմութեան աստիճան շնորհած լինելն, զոր ծանուցած ենք քանի մը շաբաթ յառաջ :

— Կ. Պոլսոյ ամերիկեան դեսպան Վուալէս զօրավարը Նիւ Եօքքէն ճամբայ ելած է և քանի մը շաբաթէն մայրաքաղաքս կը հասնի :

— Կ. Պոլսոյ պուլիարական գործակատարի անուանման խնդիրն առ կախ կը մընայ միշտ, որովհետեւ Բ. Դրան, Ալեքսանդր իշխանին և պուլիար կառավարութեան միջեւ համաձայնութիւն չդրանար : Հակառակ Բ. Դրան բացարձակ մերժման,

Ալեքսանդր իշխանը կը պնդէ որ Պ. Վուլքովիչ Կ. Պոլսոյ գործակաւտար ընդունուի : Պուլկար նախարարութիւնն ալ տարբեր ընտրելի մ'ունի :

— Ծխախոտի Բէժիի ընկերութիւնն որոշած է Մշոյ գաւառին կողմերը ծխախոտի մշակութեան համար խնամ տանիլ : Ընկերութիւնն անշուշտ մեծապէս դոհ պիտի լինի , եթէ ծխախոտ մշակել տայ Սղերդի ու Բաղէշի կողմերն ալ , յորս արդէն փորձուած է այս չահաւէտ մշակութիւնն և ընտիր ու հոտաւէտ ծխախոտ արտահանուած է , Պաֆրայի ու Սամսոնի ընտիր ծխախոտներէն դերազանց :

— Ռուսական Վսեմ գեսպանը Պայրամի տօնէն յետոյ , պատիւ պիտի ունենայ Օգոստ. Սուլթանին ներկայանալ և Ն. Վահախառութեան մատուցանել Ս. Անդրէասի պատուանշանն , ի դիմաց Ռուսիոյ Կայսեր : Սակաւ ժամանակ յետոյ , յատուկ պատգամաւորութիւն մը Կ. Պոլսէն Բեդրսպուրկ պիտի զրկուի Նիշանը Իմթիյազի պատուանշանը Վեհ. Չարին ընծայելու :

— Կը յիշուի թէ անցեալ շաբթու Կայսերական հրամանաւ յանձնարարուեցաւ ելմըտական պաշտօնատան՝ որպէս զի Օսմանեան Կայսերական պանդային հետ համաձայնի թուրքօ-ռուսական պատերազմէն վընասեալ ռուս վաճառականաց վճարելի վեց միլիոն Փրանք հարկին ի հաշիւ , յառաջիկայ դեկտեմբերին 54,000 ոսկի վճարելու համար : Ռուսական գեսպանը դոհ եղած լինիլ կը թուի այս տնօրինութենէն , բայց ռուս հպատակը կը խնդրեն միանգամայն որ Բ. Դուռն հարկ եղած երաշխաւորութիւնը տայ միւս երեք բաժիններն ալ ժամանակին վճարելու համար :

Եթէ այս երաշխաւորութիւնը չտըրուին այժմէն , ռուս հպատակը պատգամաւորութիւն մը պիտի զրկեն եղեր ի Բեդրսպուրկ , խնդրոյն լուծուիմը փութացնելու համար :

— Երկուշաբթի ժամը 3 ին ատենները Կայսերական Կառավարութիւնը յատուկ Բէշթէ մը յղած է Ֆէնէրի Յունաց Պատրիարքարանը , որով կը պատասխանէ յունաց ընտրողական ժողովէն՝ ոճրադործ քահանայից , ճգնաւորաց և ճգնաւորուհեաց համար խմբագրեալ , և ամսէ մ'իվեր առ Բ. Դուռն մատուցեալ օրինաց ծրագրոյն : Յիշեալ պաշ-

տօնագրով կը ծանուցուի յունաց պատրիարքարանին՝ որ առանձնաշնորհմանց խնդրոյն ծագմանէ ի վեր բոլոր միւս օսմանեան հըպատակ Քրիստոնեայ ժողովրդոց օրինաւոր ըղձից թարգմանն եղած է միանգամայն , թէ Կայսերական Կառավարութիւնն՝ առանց ո՛ր և է դիտողութեան , կ'ընդունի այս խնդրոյն համար եւս իրաց նախկին վիճակն : Թէեւ պատրիարքական տեղապահ Ս. Մետրապօլիտն պատրիարքարանի վարչական երկու մարմիններն ի նիստ պիտի հրաւիրէր , Բ. Դրան այս որոշումը նոցա հաղորդելու և նոր Պատրիարքի ընտրութեան համար Ընտրողական ժողովը գումարելու օրն որոշելու համար , սակայն անոնք աւելի օրինաւոր համարեր են Կառավարական Բէշթէն ուղղակի ընտրողական ժողովին մատուցանել , որ միակ ձեռնհաս մարմինն է այս օրինակ խնդրոյ մը վրայ կարծիք յայտնելու համար : Կը կարծուի թէ ընտրողական ժողովը սիրայօժար պիտի ընդունի Կառավարութեան կողմէ առաջարկեալ եղանակն և յետ այնորիկ պատրիարքական ընտրութեան պիտի ձեռնարկուի : Կըսուի թէ ընտրողական ժողովոյն քուէից առաւելութիւնը Կիզիբոնի Մետրապօլիտ Տ. Նիկողիմոսի վերապահուած է :

— Անգլիական գեսպանատուն առաջին թարգման Սըր Ալֆրէտ Սանտիսըն շաբթուս հացիկերոյթ մը տուաւ արտաքին գործոց նախարարի խորհրդական վսեմ. Տատեան Յարութիւն Էֆէնտիի և նորա որդւոյն Տիրան պէյի :

— Բաղէշէն կը գրեն թէ Վանայ անգլիական , ռուսական և պարսկական հիւպատոսք Բաղէշ կըսպասուին , ուր քսան օրի չափ մնալէ յետոյ , մերձակայ կողմերն դըօսանաց պտոյտ մը պիտի ընեն , Մուշ և ուրիշ քաղաքներ այցելելով :

— Օսմանեան միջադպային թղթատարութիւնը շաբթուս սկիզբէն թղթատարական պայուսակը Մախսուէի չողենաւուց յանձնած չլինելով , առ ժամապէս դադրեցուցած է Վառնայի հետ հաղորդակցութիւնն , զոր ըստ առաջնոյն կը կատարեն Լոյտի չողենաւք :

— Իլմիրի սլարսկական հիւպատոս անուանեցաւ Աղչալեան Յովհաննէս Էֆէտի որ փոխ-հիւպատոսի պաշտօնը կը վարէր :

— Օգոստ . Սուլթանն անցեալ ուրբաթ օր բարեհաճեցաւ իւր ներկայութեան ընդունիլ Գամանթօ կոմսն և Օսմանիյէի մեծ ժապաւէնն ընծայեց անոր : Կոմսն և իւր բժիշկը , Տօթ . Րէյ , երեքշաբթի մայրաքաղաքէն մեկնելով , Բարիզ ուղեւորեցան :

— Մայրաքաղաքիս պապական նուիրակ Տ . Բօթէլլի հինգշաբթի օրը պատիւ ունեցաւ Օգոստ . Սուլթանին ներկայանալ իւր հրաժեշտի ողջոյնը մատուցանելու համար և սիրալիր մեծարանօք ընդունուեցաւ :

— Ելնուական նախարարութիւնն հարիւր տասնեւհինգ հազար ոսկւոյ փոխառութիւն մը կնքած է Օսմանեան կայսերական Պանքային հետ , որ անցեալ շաբաթ օր 90 հազար ոսկւոյ գումար մը վճարեց ի հաշիւ այդ փոխառութեան :

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Ըստ մեր մասնաւոր տեղեկութեանց՝ կաթողիկոսական նոր ընտրութեան ժամանակն մօտերս ի պաշտօնէ պիտի հրատարակուի Ս . Էջմիածնի Սինհոդին կողմանէ : Կաթողիկոսական տեղապահ Ամեն . Տ . Մակար Ս . Արքեպիսկոպոս ի Քիւնեւ (իւր առաջնորդական վիճակը) է , և բաւական կաղըութեալ , սակայն դեռ յայտնի չէ թէ պիտի դառնայ Ս . Էջմիածին , կամ ե՛րբ պիտի դառնայ :

— Ազգային երեսփոխանաց մէկ մասն այս ուրբաթ օր Ղալաթիոյ մատենադարանի մէջ մասնաւոր նիստ մ'ընելով՝ վերջնական կերպիւ կազմակերպեցին ասկէց քանի մը ամիս յառաջ հաստատեալ « Բեմական Յաւաքդիմական Միութիւն » ը , պէտ ընտրելով Մերեքեմբուլի Յարութիւն էֆէնտին , և վաւերացնելով Սկզբանց Յայտագիր մը :

— Քաղաքական ու կրօնական ժողովներն այս չորեքշաբթի չկրցան խառն նիստ ընել՝ Պայրամի տօնի եւ օղին դժնդակութեան պատճառներով : Քաղաքական ժողովականաց ամենքն ալ բացակայ լինելուն համար :

Միայն կրօնական ժողովը նիստ ըրաւ , և հետեւեալ անօրինութիւնք հաղուդուեցան ի հրատարակութիւն :

1.— Ժողովին 23 , 24 եւ 25դ նիստերու ատենադրութիւնք վաւերացան :

2.— Ժողովը տեսնելով՝ Հաճնոյ բռնի ամուսնութեան խնդրոյն վրայ Հաճնոյ առաջնորդական տեղապահ Տ . Ստեփան քահանայի , եւ Օրիորդ Նարկիզի հօր կողմանէ Պատրիարքարան ուղղեալ հեռագիրներն , որոնց ի պաշտօնէ հրատարակութեան տալ :

3.— Կիւրինցի Տ . Խորէն Քէզիրեան՝ Աստուածաբանութեան գիրք մը երկասիրած և կրօնական ժողովոյ մատուցած լինելով՝ Ժողովը իւր անդամակիցներէն Գեր . Տ . Տաճատ Ծ . վարդապետի յանձնեց զայն ի քնննութիւն :

4.— Կրօնական ժողովը , առ ինքն ուղղեալ դանդաղագրոց վրայ , մօտերս գրած էր՝ ի Տարտանէլ պանդխտեալ Տ . Թադէոս քահանայի , որ ելնէ ուղեւորի ի Պոլիս : Ժողովը երէկ նկատելով , որ յիշեալ քահանայն դեռ խախտած չէ տեղէն , եւ Պատրիարքարան հասած է « 120 տնէր » ստորագրութեամբ գիր մը , որով քահանային ի Տարտանէլ մնալը պահանջուած է կրօնափոխութեան սպառնալէօք , ժողովը որոնց՝ հեռագրել առ քահանայն թէ Ռոտոսթոյի առաջնորդական վիճակին մէջ քահանայագործելէ դադարեալ է և պարտի փութալ ի Պոլիս . որոնց հեռագրել այս որոշումն թէ՛ առ Գեր . Առաջնորդն Ռոտոսթոյի եւ թէ՛ առ Թադական Խորհուրդն Տարտանէլի ի գիտութիւն :

5.— Պատրաստուած լինելով ննջեցելոց վրայ դամբանական խօսելու համար պէտք եղած հրահանգին ծրագիրը , Ժողովը երէկ քննեց զայն , և ընդունելով որոնց ուղղել առ քարոզիչս եկեղեցեաց մայրաքաղաքիս և արուարձանաց , և տալ ընթեռնուլ եկեղեցեաց մէջ :

6.— Պատրաստուած լինելով նաեւ՝ մայրաքաղաքիս Ազգային վարժարանաց կրօնական ուսմանց վիճակի համար կարգեալ քննչաց հրահանգն , և Ամեն . Ս . Պատրիարք Հօր կողմանէ դորձադրութիւնն հրամայեալ , որոնց երէկ ժողովը յանձնել զայն քննչաց , որք են .

Տ . Խորէն Արքեպիսկոպոս Նար . Պէյ

Տ . Սիմոն Եպիսկոպոս Սէֆէրեան

Տ . Տաճատ Ծ . վրդապ . Ոսկանեան

Տ . Յակոբ Ծ . վրդապ . Փալիազեան

Տ . Սուքիաս Աւագբէ . Ստեփանոսեան

Յիշեալ հրահանգի պատճէնք պիտի հաղորդուին Թաղական Խորհրդոց ալ :

7.— Կրօնական Ժողովը Տ. Սարգիսեան Տ. Սահակ և Փեհլիվանեան Տ. Խորէն Աւագ քահանայից յանձնեց՝ չրջադայիլ մայրաքաղաքիս եկեղեցիներն, և եկեղեցական ծիսից ու արարողութեանց տարբերութիւնները քննելով՝ տեղեկագրել առ Ժողովն :

— Գրած եմք, թէ Քաղաքական Ժողովն անցեալ շաբթու յանձնաժողով մը ընտրեց՝ Ղալաթիոյ Թաղային սնտուկին վիճակն ու Թաղական Խորհրդականաց դէմ վերելած դժուարութիւններն քննելու, պարտուպատշաճ միջոցները տեղեկագրելու, և Թաղական Խորհրդականաց ընտրելեաց ցանկ մը պատրաստելու պաշտօնով : Գրած եմք նաև, թէ Յանձնաժողովը կազմուած է Տնտեսական Խորհրդոյ, և Ղալաթիոյ կալուածոց Հոգադարձութեան երկերկու անդամներէն և Ղալաթիոյ երեք բնակիչներէն :

Սոյն Յանձնաժողովն չորեքշաբթի առաւօտ Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ առաջին նիստն ըրաւ, եւ Ղալաթիոյ բնակիչ երեք անդամք ալ ներկայ գտնուեցան, բայց որովհետեւ սոքա հրաժարեալ Թաղական Խորհրդականներէն էին՝ չուղեցին ձեռնաձուլս լինել ո՛ր և է գործի, և դարձեալ պահանջեցին որ կալուածոց սնտուկը պարտքը վճարէ Թաղային սնտուկին, ինչպէս նաեւ Ղալաթիոյ դպրոցին յատկացեալ ամսական գումարն, և ա՛յնպէս վերցուն զժուարութիւնք : Սակայն միւս անդամներն չընդունեցին այս առաջարկութիւնն, առարկելով թէ ա՛յդ չէ իրենց պաշտօնն, և հետեւաբար յիշեալ երեք անդամք հրաժարեցան, և միւսներն իրենց պաշտօնին ձեռնարկելով հանդերձ՝ Քաղաքական Ժողովին գրեցին նոցա հրաժարականն, և այլոց ընտրութեան պէտքն :

— Ամեն. Տ. Խրիմեան Սրբազան՝ որոյ համար երկար ժամանակէ հետէ կը հրատարակուի թէ ի Պոլիս ուղեւորիլ կը պատրաստուի, ըստ մեր մասնաւոր տեղեկութեանց՝ այս օրերս ի վան զբաղեալ է Սանդխտեան օրիորդական վարժարանի վերաբերեալ շինութեան գործով, և միանգամայն՝ վարագայ վանուց սեպհական Սալախանէ ըսուած գիւղի և հողերու խնդրով, զոր յարուցած են թուրքք, և ջանահնար կը լինին իւրացնել և բռնակալել յիշեալ գիւղն ու հողերը :

— Մեծաւ գոհութեամբ կիմանալք, թէ Բեդրասյուրկ բնակեալ Հանրածանօթ Աղա Մկրտիչ Սարգսեան Սանասարեանց, որ քանիցս առատ նուէրներ ըրած է վանայ Սանդխտեան վարժարանի համար, այս օրերս 2000 բուսլի եւս նուիրած է՝ վարժարանին վրայ նոր յարկ մը աւելցնելու համար, և ահա այս յարկին շինութեամբ զբաղեալ է Ամեն. Խրիմեան Հայրն : Աղա Սանասարեանց, բաց յայսցանէ, 10000 բուսլիի տոկոս յատկացուցած է վարժարանին ուսումնական ծախսուց համար, և վարժարանին առնունք Մարիամեան պիտի կոչուի՝ ի յիշատակ առաքինի մօր նորա :

— Աւասիկ Հաճընոյ բռնի ամուսնութեան դէպքին վրայ նորագոյն տեղեկութեանց ամփոփումն : Գըրգեաշարեան Աղա և իւր եղբայրն, որք Ատանա կը գտնուին, կրկին հեռագրաւ կը հաստատեն, թէ Եպիսկոպոսն և չօրպաճիք բռնի ամուսնացուցած են Օրիորդ Նարկիզն և թէ նոքա այժմ ջանահնար կը լինին՝ Օրիորդին ձեռքէն ստորագրութիւն կորզել իբր թէ ինքն՝ հայրն ու ազգականք այդ ամուսնութեան համար հաճութիւն ունէին և թէ դո՛ւ են այժմ :

Անդլիոյ դեսպանատան կողմէ Թարգման մը շաբթուս սկիզբը Կրօնական Ժողովոյ առնապետ Գեր. Նար-Պէյ Սրբազանի ներկայանալով, յայտնեց թէ Ատանայի անդլիական հիւպատոսին կողմէ հեռագրեր եկած են դեսպանատուն, որք լրագրաց քըստմնելի հրատարակութիւնքը կը հաստատեն : Դեսպանատունը փափագ յայտնած լինելով զիտնալ բռնութեան հեղինակները պատժելու համար ձեռք առնուած միջոցները, Նար-Պէյ Սրբազան պատասխանեց թէ Պատրիարքարանը խնդիրը զօրաւոր կերպիւ ձեռք առած է և կը զբաղի արդարութիւնը երեւան հանելու :

Չորեքշաբթի առաւօտ ալ Հաճնոյ առաջնորդական փոխանորդ Տ. Ստեփան քահանայի կողմանէ հեռագիր մը եկաւ ի Պատրիարքարան որ կը յայտնէ թէ լրագրաց հրատարակութիւնք իրողութեան հակառակ են, եւ դատական քննչին առջեւ կատարուած քննութեամբ ապացուցուեց է թէ Նարկիզ իւր յօժար կտուք կին եղեր է Հայրապետին :

Տ. Ստեփան զՆարկիզ Հայրապետի հետ պատկող քահանայն է և խնդիրը չլմնար իւր այս վկայութեամբ :

Ա. Զ. Դ.

Քոնստիտէի քանի մը կտրոն-
ներու վճարման մասին տարակոյններ
ծագած լինելով, Օսմ: Հանրային Պար-
տուց Վարչական խորհուրդը պարտ
անձին կը համարի ծանուցանել թէ հե-
տագայ թուանշանները կրող բաժնե-
թուղթերը վերաբերութիւն չունին Քոն-
ստիտէի պատկանող բաժնեթղթոց հետ,
որոց տոկոսները և գլխավճարները ի-
րեն կը վերաբերին 1881 դեկտեմբեր
8/20 ի Կայսերական Իրաւէով:

Այդ բաժնեթուղթերն են .	ապի
611756 Էն	685864 100
749233 »	751364 100
756365 »	775364 50
793439 »	800674 40
812414 »	814309 40

Կ. Պոլիս, 29 սեպտ. 1884

ՀԱՅ ԹԷՅԱՎԱՃԱՌ

Ե Թահաշ Կողոյ, աղբէրէն Ժող, Ըն 70

Այս վաճառատուն՝ որ մէկ տարիէ ա-
ւելի ժամանակէ հետէ իւր յաճախորդները
գոհացնելու ջանք չէ խնայած, կը ծանու-
ցանէ թէ Չինաստանի և Ճապոնի բերքերէն
այս անգամ զանազան տեսակ ընտիր թէյեր
(չա) բերել տուած է յատկապէս, եւ կը
խնդրէ սիրելի ազգայիններէ, մանաւանդ
զաւառացի Հայ Ժողովներէ որպէս զի
հաճին գէթ միանգամ ի մօտոյ տեսնել իւր
ազգայններն և փորձել թէ՛ տեսակաց լա-
ւութիւնը, եւ թէ՛ գիններու աժանութիւնը:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՄԻՍՅԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՅ ՀԱՅՈՅ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԹՈՒԱՔԱՆՈՒԹԻՒՆ

Ե Ի

ԵՐԿՐԱԶՓԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Հանդէս Բաժնէն Խնդրէն

և Վարձաճեմք

Կը պարունակէ 50 ի չափ մեծ ու փոքր
պատկերներ:

Գին 5 դահեկան արծաթ

Շատ գնողներու համար մասնաւոր
ղեղձ կը լինի:

Կը գտնուի բոլոր գրավաճառաց
քով: Կեդրոնատեղին է Հայոց Միաց-
եալ Ընկերութեանց գրասենեակն, Կա-
լաթա, Կէօշէ Օղլու խան, Թիւ 12:

Հայոց Միացեալ Ընկերութեանց
կնիքը չկրող օրինակներն անվաւեր են:

ՀԱՄԱՌՕՏ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Դպրոցաց համար

Հին պատմութիւն Արեւելեան Ժողովրդոց

Հատոր Ա.

(Երկրորդ Տպագրութիւն)
Յօրինեց

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Կեդրոնատեղին է Յ. Զէն ճիրճեան
էֆէնտիի գրատունը ի Կ. Պոլիս Մահ-
մուտ փաշա: Գին 6 դրուշ:

ԼԷԴԱԻՅԻ ԱՍՍՐ

ԳԵՂԵՅԻԿ ԳՐՈՒԱԾՔ

Գրեց և Հաւաքեց

Մէհրան Աբէկեան

Բարոյական, Եկարագրական, Գիտա-
կան և Պատմական հատուածներ, Առակ-
ներ, Զուարճալիք, Հանելուկներ, այլ և այլ
Մուրհակներ, Պայմանագրեր, Նամակներ
և Աղբրագրեր:

Կը ծախուի Հայ գրավաճառաց և Պահ-
ճէ-Գաբու ջրավաճառ Պողոս և Յակոբ ա-
ղաներու քով: Գին 100 փարայ:


ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԻՖԹԱՀԸ ԼԻՍԱՆԸ ՕՍՄԱՆԻ

Գրք. Պ. Պ. Դաւաճեան էֆէնտի:

Գործնական ընդարձակ Քերական-
ութիւն թուրք. Արաբ. և Պարս. լեզ-
ուաց, առաջին անգամ հրատարակեալ
Հայերէն բացատրութեամբ, ճոխ հրա-
հանգներով, գործնական օրինակներով
և կարեւոր բառագրքով մի: Կեդրո-
նատեղին է Դավաֆեան գրատունը: Կը
գտնուի ամէն Հայ գրավաճառաց քով:

Գին 10 դրուշ:



Ա. Ա. Մինասեան և Ընկերաց Ամերիկեան Վաճառատան մէջ կը ծախուին Ամերիկայի Երկրագործական գործիքներ: Չանազան տեսակ Արօրներ, Մարացորեն վար տուող գործիք, մեծ և փոքր: Յորեն մաղելու գործիք մեծ և փոքր: Գլխաւոր և խոտ ջարդող գործիք: Չանազան գործիքներ բանեցնելու համար ձիով դաշտող մեքենայ: Պարտէզի գործիքներ: Հրդեհի փոքր ջրհան և այլ զանազան Ամերիկայի ջրհաններ: Այլ և այլ պտղոց ջուրերը հանելու գործիք: Զիւրու և արջառաց կերը մանրելու աղօրիք, և այլն, և այլն:

Ամերիկեան Վաճառատուն ի Ղալաթիա Կոստանդնուպոլսոյ:

Ա. Զ. Դ.

Տոբթոր Կ. Օրմանեան էֆէնտի պատիւ ունի ծանուցանել իւր յարգոյ յաճախորդաց թէ, որպէս յառաջագոյն, հիւանդ ընդունելով հանդերձ ի Պոլիս, Վ. Մաննիի դեղարանը, խորհրդատրուութեան և ելեկտրականութեան սենեակ մը բացած է Բերա, Բասաժ Օրիան, դալ, թիւ 8: Խորհրդատրուութիւնը և ելեկտրականութեան փորձերը կը լինին ամէն օր առաւօտեան, եւրոպական ժամ 8 էն 9:

ԿԱՐԵՒՈՐ Ա.Զ.Դ.

ԴՐԱՍԵՆԵԱԿ

ԱՂԵՔՍԱՆԳՐ ԷՅ. ՄԵՐԵԷՄ-ԳՈՒԼԻ
Դուռնից:

ՌԱՀԻՄ ԷՖ. Մահմետական օրէնսդէտ.
Յ. ՇԱՀՆԱԶԱՐ ԷՖ. Փարիզու ճեմարանէն.

Ն. ՊՈՅԱՃԵԱՆ Օսմանեան իրաւագէտ Ա. Կարգի:

Այս գրասենեկին յարաբերութիւնը օր ըստ օրէ ընդարձակուելով հարկադ.

րեցին տալ անոր վերոյիշեալ կազմակերպութիւնը: Նոր գործակիցներու աջակցութեամբ այսուհետեւ պիտի ըստանձնուին նաեւ Շէքի դատերն, և գործերն առհասարակ ամենն ալ պիտի ստանան իրենց լուծումն աւելի փութով և խնամօք:

Դրասենեակ, Կալաթա, Մէհմետ Ալի փաշա խան, թիւ 5:

ԾԻԱԽՈՏԻ ՇԱՀՍԿԱՅԱՆ ՐԷԺԻ
ԹՈՒՐԳԻՈՅ

Ա.Զ.Դ.

Թուրքիոյ ծխախոտի Շահակցական Րէժիի վարչութիւնը նկատելով որ ամեն օր բազմաթիւ անձինք կը դիմեն իրեն պաշտօն խնդրելու համար, կը ծանուցանէ թէ իւր պաշտօնէից թիւն ամբողջացած լինելով, այսուհետեւ չպիտի ընդունին սոյնօրինակ խնդրագրեր:

Կ. Պոլիս, 13/25 սեպտ. 1884

ԸՆԴՀ. ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

Արտոնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼԵԱԳՐՈՅ